491.99-5
Թ-88

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԹՈՒՄԱՆԵԱՆ

ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀԱԲԱՐ ԼԵԶՒԻ

ՀԱՄԱՌՕՏ

ՀԱՄԱԶԱՅՆՈՒԹԻՒՆ

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹԻՒՆՆԵՐՈՎ ԵՒ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐՈՎ

Սեռերին եւ միջին դպրոցների համար

491.99-5
Թ-88

ԹԻՖԼԻՍ

Էլեքտր. տպարան Օր. Ն. Աղանեանցի, Պօլից. № 7

1911

Книжный магазинъ
„ГИРЪ"
ТИФЛИСЪ.

19 APR 2013
6320
04 MAY 2010

ՑԱՐՈՒԹԻՒՆ ԹՈՒՄԱՆԵԱՆ

425
Ֆ3-ԹՈ
ա 43

ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀԱԲԱՐ ԼԵԶՒԻ

491.99-5
Թ-88

ՀԱՄԱՌՕՏ

ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԻՒՆ

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹԻՒՆՆԵՐՈՎ ԵՒ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐՈՎ

L 004
Ե 39

Ստորին եւ միջին դպրոցների համար

Հ.Ս.Խ.Հ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
C.C.C.P.A Публичная библиотека
7/XI 1922
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ԹԻՖԼԻՍ

Էլեքտր. տպարան Օր. Ն. Ադաճեանի, Պօլից. № 7

1911

ԱՌԱՋԱԲԱՆ

Որովհետև այս դասագիրքը, ինչպէս և իմ «Ստուգաբանութիւնը», որոշուած է ստորին և միջին դպրոցների համար, այդ պատճառով էլ այստեղ զետեղուած են մեր աշխարհաբար լեզուի համաձայնութեան միմիայն ամենակարևոր գիտելիքները։ Դասընթացն աւելի գործնական դարձնելու համար՝ զետեղուած են զանազան վարժութիւններ ու օրինակներ, որոնց շնորհիւ քերականութիւն սովորողը հիմնաւորապէս իւրացնում է այս կամ այն լեզուական կանոնը կամ առանձնայատկութիւնը։ Սակայն անհրաժեշտ է, որ այդ տեսակ վարժութիւններ ու օրինակներ կազմուեն ամեն անգամ աշակերտների ուսած յօդուածներից կամ ոտանաւորներից։ Ռուսերէն քերականութիւն իմացողներին աւելի դիւրութիւն տալու համար՝ փակագծերի մէջ դրուած են քերականական այն տերմինների թարգմանութիւնները, որոնք չեն եղել եմ «Ստուգաբանութեան» մէջ։

Թիֆլիսի II իգական, IV արական գիմնազիաների եւ Առեւտրական դպրոցի դասատու՝

Յարութիւն Թումանեան

ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՆՐԱ ԲԱԺԱՆՈՒՄԸ

§ 1. Քերականութեան այն մասը, որը ծանօթացնում է մեզ բառերի և նախադասութիւնների կապակցութեան կանոնների հետ, կոչւում է *Համաձայնութիւն* (Синтаксисъ)։ *Համաձայնութիւնը բաժանւում է երկու մասի՝* I. *Բառերի կապակցութեան* (Сочетаніе словъ) *և* II. *Նախադասութիւնների կապակցութեան* (Сочетаніе предложеній)։

Առաջին մասը ցոյց է տալիս՝ թէ ինչպէս ու ե՞րբ պէտք է փոխել փոփոխւող բանի մասերի վերջաւորութիւնները և ե՞րբ ու ի՞նչ նախդիր կամ յետադիր պէտք է գործ ածել այս կամ այն հոլովւող բառի հետ։ Իսկ երկրորդ մասը ցոյց է տալիս՝ թէ ե՞րբ ու ի՞նչ շաղկապներ կամ շաղկապների մտքով դրւող բառեր (դերանուններ, մակբայներ) պէտք է գործ ածել նախադասութիւնները իրար հետ կապելու ժամանակ։

I

ԲԱՌԵՐԻ ԿԱՊԱԿՑՈՒԹԻՒՆԸ

ՆԱԽԱԴԱՍՈՒԹԵԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԱՐՏԱՅԱՅՏՈՒԹԻՒՆԸ ԲԱՆԻ ՄԱՍԵՐՈՎ

§ 2. ԵՆԹԱԿԱՅԻ ԱՐՏԱՅԱՅՏՈՒԹԻՒՆԸ։ Ենթական գլխաւորապէս արտայայտւում է զոյական անունով։—Աշակերտը գրում է։

Բացի դրանից ենթական կարող է արտայայտւել՝

Դերանունով։—Նա կարդում է։

Բայով (անորոշ եղան. յօդով)։—Կարդալն օգտակար է։

Ածականով։—Կուշտը քաղցածին մանր կը բերդի։

Թւականով։—Կոյսերից հինգը յիմար էին։

§ 3. ՍՏՈՐՈԳԵԱԼԻ ԱՐՏԱՅԱՅՏՈՒԹԻՒՆԸ։ Պարզ ստորոգեալն արտայայտւում է բայով։—Կարդա, զրիր տարին բոլոր։ Գիր կարդալով կը ճանաչես չարն ու բարին, դու կ'իմանաս՝ ով է խնդում, ով է լալիս, ով է զրկում խեղճ թշւառին։

Բարդ ստորագրեալը, որը միշտ էական բայի հետ միասին է լինում, արտայայտւում է՝

Ածականով։—Երկինքը պարզ էր։

Զոյականով։—Ոսկին մետաղ է։

Դերանունով։—Աշխարհս նոյնն է, բայց մարդիկ են փոխւել։

Թւականով։—Մեր դրամատուրգների մէջ Գ. Սունդուկեանն առաջինն է։ Ամենայն տեղ մահը մի է։

§ 4. ԼՐԱՑՈՒՑԻՉԻ ԱՐՏԱՅԱՅՏՈՒԹԻՒՆԸ։ Լրացուցիչն էլ ենթակայի նման՝ գլխաւորապէս արտայայտւում է զոյականով։—Հայրը սիրում է որդուն։ Եղբայրը ստացաւ նամակ իր քրոջից։ Փայտը կտրում են կացնով։

Բացի դրանից լրացուցիչն արտայայտւում է՝

Դերանունով։—Արդեօք ինչ էք դուք ինձ բերում, գարնան անձրև՞, թէ կարկուտ։

Ածականով։—Խելին խրատը, սելին սապոնն ինչ անի։

Թւականով։—Կոյսերից հնգին ներս չը թողին։

Բայով։—Ես ուզում եմ երգել։ Ձեր կարդալուն արդեօք երգս չի՞ խանգարիլ։

§ 5. ՅԱՏԿԱՑՈՒՑԻՉԻ ԱՐՏԱՅԱՅՏՈՒԹԻՒՆԸ։ Յատկացուցիչը գլխաւորապէս արտայայտւում է ածականով ու դերբայով։—Թութակը գերի էր նեղ (ածակ.) ու փակւած (դերբ.) վանդակում։

Բացի դրանից յատկացուցիչն արտայայտւում է՝

Դերանունով։—Մրջիւնը բերնով իր կերն է տանում։

Թւականով։—Ես ունիմ երկու գիրք։

Գոյականով։—Ծովի ջուրն աղի է։ Թիֆլիս քաղաքը մեծ է։

§ 6. ՊԱՐԱԳԱՅԱԿԱՆ ԲԱՌԵՐԻ ԱՐՏԱՅԱՅՏՈՒԹԻՒՆԸ։ Պարագայական բառերը արտայայտւում են՝

Մակբայով։—Այսօր կ'աշխատեմ, վաղը կը խաղամ։ Սոխակը քաղցը (ածականից առաջ եկած մակբայ) է երգում։

Թւականով։—Աշակերտները նստած են երկուերկու։

Գոյականով։—Գիւղացին դաշտից վերադարձաւ տուն։

Բայով։—Ձկնորսը գնաց ձուկ որսալու։

Վարժութիւն։—1. Վերլուծեցէք հետևեալ նախադասութիւնները և որոշեցէք՝ թէ ինչ բանի մասով են արտայայտւած նրանց անդամները.

Տգեղի սիրտը դարձել էր ժէռ քար,
Քրոջ խնդիրքը թողեց անկատար։

—

Ձկնորսը ծովը ձգեց մեծ ուռկան,
Բռնեց մարմինը սիրուն աղջկան։

—

Եօթից հանենք երկու, կը մնայ հինգ։

—

Ես ինչ որ ուզում եմ կարդալ, դու էլ այն ես ուզում։

—

Նա լուռ էր. բայց այդ լռութիւն խորին
Նման էր անհուն ու անդորր ծովին։

ՍՏՈՐՈԳԵԱԼԻ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԻՒՆԸ ԵՆԹԱԿԱՅԻ ՀԵՏ

§ 7. ՊԱՐԶ ՍՏՈՐՈԳԵԱԼԻ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԻՒՆԸ

1. Պարզ ստորոգեալը համաձայնւում է ենթակայի հետ թւով և դէմքով։—Ես կարդում եմ գիրք։ Դու գրում ես դասդ։ Աշակերտները գնացին տուն։

Ծանօթ.—Ժողովրդական լեզուի մէջ, երբ ենթական յոգնակի է լինում, բայ-ստորոգրեալը յաճախ դրւում է եզակի։—Աչքերս յանկարծ մթնեց (փոխանակ մթնեցին)։ Ծնկներս թուլացաւ (փոխանակ թուլացան)։

2. Եթէ նախադասութեան մէջ կան երկու կամ աւելի եզակի կամ յոգնակի ենթականեր, բայ-ստորոգեալը դրւում է յոգնակի։—

Ցղայ, աղջիկ ուրախ, գըւարթ՝
Փթըթեցան գերդ մայիսի վարդ։

Գարնանը բացւում՝ են վարդ, մեխակ, շուշան և ուրիշ շատ ծաղիկներ։

3. Եթէ կան երկու կամ աւելի եզակի ենթականեր նոյնանման նշանակութեամբ, բայ-ստորոգեալը դրւում է եզակի։—

Ամեն տեղ կարգ ու կանոն է պահանջւում։ Ամեն բանում չափ ու սահման պիտի լինի։

4. Եթէ ենթակաները զանազան դէմքով են, բայ-ստորոգեալը դրւում է յոգնակի, և այդ դէպքում

առաջին դէմքը գերադասւում է երկրորդից, երկրորդը՝ երրորդից։—

Դու, ես և նա կ'երգենք միասին։ Նա և դու կը գնաք զբօսնելու։

5. Իսկ եթէ այլադէմ ենթակաները կապւած են ոչ—ոչ, թէ—թէ, կամ—կամ և այլն շաղկապներով, բայ-ստորոգեալը համաձայնւում է մօտիկ ենթակայի հետ։—

Ոչ նրանք են ուզում գալ, ոչ էլ դու։ Թէ դու կը գնաս զբօսնելու, և թէ նրանք։ Կամ մենք կը մնանք, կամ նա։

6. Եթէ եզակի ենթակայի հետ կայ թւական անուն, բայ-ստորոգեալը դրւում է և՛ եզակի, և՛ յոգնակի։—

Առաջին դասարանից երեսունուվեց աշակերտ փոխադրուեցին (կամ փոխադրուեց), իսկ չորս հոգի մընաց (կամ մնացին)։

7. Եթէ ենթական հաւաքական անուն է, բայ-ստորոգեալը սովորաբար դրւում է եզակի։—

Եկեղեցում շատ ժողովուրդ կար։

8. Եթէ եզակի ենթակայի մօտ կայ սեռական հոլովով լրացուցիչ հետ յետադիրով, բայ-ստորոգեալը դրւում է՝ ա) եզակի, երբ գործողութիւնը կենտրոնանում է ենթակայի մէջ, և բ) յոգնակի, երբ որոշակի յայտնւում է երկրորդական առարկայի մասնակցութիւնը։—

ա) Հայրը որդու հետ գնաց պարտէզ։

բ) Հայրը որդու հետ գնացին պարտէզ։

9. Անդէմ նախադասութեան մէջ բայ-ստորո-

գեալը արտայայտուում է անդէմ բայով, որ սովորաբար գործ է ածւում 3-րդ դէմքով։—

Լուսացաւ, լուսացաւ, լուսն է բարին։

Անդէմ բայի մտքով են գործ ածւում երբեմն դիմաւոր բայի յոգնակի 3-րդ և եզակի 2-րդ դէմքը, երբ զօրութեամբ իմացւում է ոմանք, շատ մարդիկ, ամբոխ մարդիկ կամ ամեն մարդ ենթական։—

Ասում են, որ ամենայն մարդ մի աստղ ունի երկնքում։ Ինչ կը ցանես, այն կը հնձես։

Վարժութիւն։—1. Հետևեալ նախադասութիւնների մէջ համաձայնեցրէք պարզ ստորոգեալները իրանց ենթակաների հետ.

Արամն ու Լևոնը գնաց... դպրոց, իսկ Հայկը մնաց... տանը։ Հայկն ու ես կարդում... գիրք։ Վաղը ես, եղբայրս և դու կը գն... թատրոն։ Ոչ քոյրերս, ոչ էլ մայրս ուն... ժամանակ մեզ հետ գալու։ Միւս անգամ թէ քոյրերս կը... թէ մայրս։ Մեր տանը կա... ութը հոգի։ Մեր տնից հինգ հոգի սովորում... դպրոցում, իսկ մնացած երեքը դեռ չ... մտել դպրոց։

2. Կազմեցէք պարզ ստորոգեալի և ենթակայի համաձայնութեան մի քանի օրինակներ։

§ 8. ԲԱՐԴ ՍՏՈՐՈԳԵԱԼԻ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԻՒՆԸ

1. Բարդ ստորոգեալի մէջ ածականը, գոյականը, դերանունը և թւականը չեն փոխւում. փոխւում է միայն էական բայը, որը համաձայնւում է ենթակայի հետ դէմքով ու թւով։—

Դաշտը կանաչ է։ Դաշտերը կանաչ են։ Ես աշակերտ եմ։ Դուք աշակերտ էք։ Ես դարձեալ այն եմ, ինչ որ առաջ։ Դուք դարձեալ այն էք, ինչ որ

առաջ։ Մեր վիպասանների մէջ Բաֆֆին առաջինն է։ Մեր վիպասանների մէջ Բաֆֆին ու Պռոշեանը առաջինն են։

2. Բայց շատ անգամ բարդ ստորոգեալի մէջ գոյականը համաձայնւում է ենթակայի հետ միմիայն թւով։—

Աստղերը երկնային մարմիններ են։ Ոսկին և արծաթը ազնիւ մետաղներ են։

Կան դէպքեր, երբ գոյականը ենթակայի հետ թւով կարող է և համաձայնւել, և չհամաձայնւել։

Օրինակ, փոխանակ ասելու՝ Դուք աշակերտ էք, կարելի է ասել՝ Դուք աշակերտներ էք։

3. Երբ նախադասութեան մէջ կան երկու կամ աւելի բարդ ստորոգեալներ, էական բայը միայն մի անգամ է յիշւում սկզբումը կամ վերջումը։—

Գարունը զով է, անուշ ու գեղեցիկ։

Գարունը զով, անուշ ու գեղեցիկ է։

4. Բարդ ստորոգեալի մէջ էական բայի պաշտօն են կատարում դառնալ, մնալ, լինել բայերը։— Ամբար, մառան դատարկ դառան։ Ու գնաց որդին, եղաւ խորիմաստ, գիտուն ու հանճար։ Նա հօր խօսքերից զարմացած մնաց։

Վարժութիւն.—Հետևեալ նախադասութիւնների մէջ համաձայնեցրէք բարդ ստորոգեալները իրանց ենթակաների հետ.

Սոխակը երգիչ թռչուն է...։ Սոխակն ու դեղձանիկը երգիչ թռչուն...։ Սոխակն ու դեղձանիկը վանդակում պատուհանից կախած...։ Մարգարիտն ու Ադելայիդան աշակերտուհիների մէջ ամենահամեստն... Մարգարիտը Ադելայիդայի քոյրն...։ Այդ երկու աշակերտուհիները քոյր...։ Հայկն ու Արամը դպրոցում առաջինն...

2. Կազմեցէք ձեզանից բարդ ստորոգեալի և ենթակայի համաձայնութեան մի քանի օրինակներ։

§ 9. ԲԱՅԻ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹԻՒՆԸ

1. Ներկայ ժամանակը գործ է ածւում այն ժամանակ, երբ խօսւում է կամ ներկայ, կամ թէ մնայուն ու անփոփոխ գործողութեան կամ դրութեան մասին։—

Աշակերտները սովորում են, ուսուցիչը սովորացնում է։

Մարտը տալիս է ձնծաղիկ,
Ապրիլ՝ կապոյտ մանուշակ.
Մայիսին ըացւում է վարդը,
Սոխակ երգում անուշակ։

—

Մռայլ, ահաւոր ձորի անդնդում
Թարթարն անդադար զոչում է, թնդում։

2. Ներկայ ժամանակը, բացի իր սովորական գործածութիւնից, երբեմն գործ է ածւում անցեալ կատարեալի տեղ, երբ կամենում են անցեալ գործողութիւնը աւելի կենդանի պատկերացնել աչքի առաջ։—

Խուռն կան Հայերն մի փոսի առաջ,
Սրտից անդադար հանում են թառաչ.
Դառն արտասունքը նոցա աչքերին
Հոսում են առատ ամայի գետնին։

Այստեղ հեղինակը նկարագրում է Վարդան Մամիկոնեանի թաղումը, որ կատարւել է 451 թուին. բայց կամենալով անցած դէպքը աւելի կենդանի պատկերացնել մեր աչքի առաջ, բոլոր ստորոգեալները, փոխանակ անցեալ կատարեալի, ներկայ ժամանակով է գործ ածել։

3. Ներկան դրւում է ապառնու տեղ, երբ խօսւում է այնպիսի ապագայ գործողութեան կամ դրութեան մասին, որ անպատճառ պիտի լինի։—

Եկող տարի գնում եմ Պետերբուրգ։ Վաղը երեկոյեան հայոց ներկայացում կայ։

4. Անցեալ անկատարը գործ է ածւում, երբ խօսում է չը վերջացած գործողութեան կամ դրութեան մասին։—

Տրամութեան մռայլ ամպը ճակատին՝
Նայում էր անթարթ Թամրազը գետնին,
Նայում էր, տանջւում դաժան մտքերից,
Անհանգիստ լինում ծանր հոգսերից։

5. Անց. անկատարը երբեմն գործ է ածւում կատարեալի տեղ, երբ խօսւում է մերձաւոր անցեալում կատարւած գործողութեան մասին։—

Երէկ ձիւն էր գալիս։

6. Անց. կատարեալը գործ է ածւում, երբ խօսւում է արդէն կատարւած կամ վերջացած գործողութեան մասին։—

Արդէն կատարւեց... Ցափշտակեցին...
Զէնքը սրբազան արդէն խլեցին.
Հայրական անգին աւանդն ամբիծ
Խլեց թշնամին ժառանգի ձեռքից...
Իւսուփի օրը սևացաւ գլխին,
Խաւարեց աշխարհ, մռայլեց կրկին։

7. Վաղակատարը գործ է ածւում, երբ խօս-

ւում է արդէն վաղուց կատարուած գործողութեան մասին։—

Հեռացել եմ իմ մայրենի աշխարհից,
Սերտ բարեկամք անջատուած են ինձանից։

8. Գերակատարը գործ է ածւում, երբ խօսւում է հեռաւոր անցեալում կատարուած գործողութեան մասին։—

Հեռացել էի իմ մայրենի աշխարհից։

Ինչպէս տեսնում ենք, վաղակատարը և գերակատարը տարբերւում են միմեանցից միայն օժանդակ բայի ներկայ և անկատար ժամանակներով։

9. Պայմանական անցեալը յայտնում է այնպիսի գործողութիւն, որ կախում ունի մի որևիցէ պայմանից։

Իսկ ստորադասական անցեալը յայտնում է թէական գործողութիւն։—

Աշակերտը դասարանը կը փոխէր (պայմ. անց.), եթէ աշխատէր ամբողջ տարին։

Ինչպէս տեսնում ենք, պայմանական անցեալը կը մասնիկով է, իսկ ստորադասականը՝ եթէ-ով։

Սակայն յաճախ կը մասնիկի տեղ գործ է ածւում պիտի, իսկ եթէ-ի տեղ՝ եթէ որ, որ, թէ, թէ որ։—

Աշակերտը դասարանը պիտի փոխէր, եթէ որ աշխատէր ամբողջ տարին։

10. Պարզ ապառնին գործ է ածւում, երբ խօսւում է ապագայ գործողութեան մասին։—

Դպրոցում կ'առնէք ուսում, կրթութիւն,
Դպրոցը կը տայ ձեզ բարօրութիւն։

Երբ հարկ է յայտնել, թէ գործողութիւնը ան-

շուշտ կատարւելու է, կը մասնիկի տեղ գործ է ածւում պիտի կամ պէտք է։—

Վաղը պիտի գնամ բարեկամիս մօտ։

11. Ապառնին կը մասնիկով և առանց նրան՝ երբեմն գործ է ածւում հրամայական եղանակի տեղ։—

Կ'երթաս այս ձորով, կը մտնես անտառ,
Այնտեղ կը գտնես բախտդ անպատճառ։

—

Գնանք, փրկենք մեր հայրենիքը։

—

Վաղն անպատճառ գաս մեր տուն։

—

Դու չը հաւատաս, եթէ քեզ ասեն՝
Հանգիստ դու նստիր և յուսով եղիր։

12. Ստորադասական ապառնին գործ է ածւում, երբ խօսւում է թէական ապագայ գործողութեան մասին, և սկսւում է եթէ, թէ, եթէ որ, որ բառերով կամ առանց սրանց։—

Եթէ աշխատես, դասարանդ կը փոխես։
Աշխատես, դասարանդ կը փոխես։

Վարժութիւն։—1. Հետևեալ օրինակներից ջոկեցէք բայերը և բացատրեցէք, թէ որ ժամանակով են նրանք գործ ածւած և ինչու.

Թամրազը շքեղ հանդէս էր սարքել—
Թուրք հարկահան էր նորա մօտ եկել...
Այսօր Թամրազը շողոքորթելով՝
Պարսից արքայի ծառայի գլխով
Թիթեռի նման՝ պտոյտ է գալիս,
Մեծարում նորան ու պատիւ տալիս...

—

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՅՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
S.S.S.R. Publicnaya Biblioteka
7/XI 1922
ИМЕНИ А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
1004
16391

Եթէ կամենաս, կարող ես կանչել
Իւսուփին քեզ մօտ ու ձեռքից խլել։

—

Ղամարն ասաց.
«Լաւ էր, որ եթէ բերէին ինձ մօտ
Անզգայ, անշունչ քո դին արիւնոտ
Ու ինձ ասէին՝ մեռաւ քո որդին,
Հօր նըւիրական աւանդը ձեռքին.
Գնա, հեռացիր, դարշելի էակ,
Էլ այսուհետև ես չ'ունեմ զաւակ»։

2. Կազմեցէք մի քանի նախադասութիւններ բայերի զանազան ժամանակներով։

ՅԱՏԿԱՑՈՒՑՉԻ ՀԱՄԱԶԱՅՆՈՒԹԻՒՆԸ ՅԱՏԿԱՑԵԱԼԻ ՀԵՏ

§ 10. ԱԾԱԿԱՆ ՅԱՏԿԱՑՈՒՑՉԻ ՀԱՄԱԶԱՅՆՈՒԹԻՒՆԸ

1. Ածական յատկացուցիչը սովորաբար դրւում է իր յատկացեալից առաջ և մնում է անփոփոխ։—

Կապոյտ գլխով, կանաչ ոտով
Ես ծաղիկ եմ անուշ հոտով։

Բայց բանաստեղծութիւնների մէջ յատկացուցիչը կարող է դրւել իր յատկացեալից և առաջ, և յետոյ։—

Կարօտ ենք տեսքիդ, աննման գարուն,
Շուտ արի՛ մեզ մօտ, քեր ծաղիկ սիրուն։

2. Ածական յատկացուցիչը, երբ արտայայտւած է լինում կրճատւած նախադասութեան ձևով, դրրւում է յատկացեալից յետոյ։—

Մի մարդ տեսայ, չափազանց քարի (այսինքն, մի մարդ տեսայ, որ չափազանց քարի էր)։

3. Տեսակ ցոյց տալու համար, ածականը երբեմն դրւում է գոյականից յետոյ. այդ դէպքում գոյականը սեռական յատկացուցչի ձև է ստանում, իսկ ածականը այլ ևս յատկացուցչի դեր չի կատարում։—

Տանձի լաւը արջը կ'ուտի (այսինքն, լաւ տանձը արջը կ'ուտի)։

4. Սաստկութիւն ցոյց տալու համար յոգնակի

գոյականի մօտ յաճախ կրկնւում է միևնոյն ածական յատկացուցիչը։—

Խոր-խոր ձորեր։ Սուր-սուր աչքեր։ Մեծ-մեծ տներ։

5. Երբ գոյականը զօրութեամբ է իմացւում, ածականն ընդունում է նրա հոլովն ու թիւը։—

Աղքատներին պէտք է օգնել (այսինքն, աղքատ մարդկանց պէտք է օգնել)։

§ 11. ԴԵՐԲԱՅ, ԴԵՐԱՆՈՒՆ ԵՒ ԹԻԱԿԱՆ ՅԱՏԿԱՑՈՒՑՉԻ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԻՒՆԸ

1. Դերբայ յատկացուցիչը, իբրև բայածական, համաձայնւում է իր յատկացեալի հետ ածականների պէս։—

Ցոգնած հովիւը վազում էր, վազում,
Փախչող այծերին հասնել չէր կարում։

2. Դերանուն յատկացուցիչը, ածականների նըման՝ դրւում է յատկացեալից առաջ և մնում է անփոփոխ։—

Իմ տիկինը կերակրում է
Ինձ նշերով, շաքարով,
Իմ վանդակը զարդարում է
Իր քնքուշիկ ձեռներով։

3. Թւական յատկացուցիչը նմանապէս դրւում է յատկացեալից առաջ և մնում է անփոփոխ։—

Առաջին դասարանն ունի չորս լուսամուտ և մէկ դուռը։

4. Եթէ նախադասութեան մէջ լինում են զանազան տեսակ յատկացուցիչներ, առաջ դասւում են աւելի որոշեալները։—

Այս ըոլորը հայ աշակերտները գրում են իրանց տուած դասը։

§ 12. ԳՈՅԱԿԱՆ ՅԱՏԿԱՑՈՒՑՉԻ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԻՒՆԸ

1. Գոյական յատկացուցիչը սովորաբար իր յատկացեալից նախադաս է վարւում և դրւում է սեռական հոլովով։—

Աշնանը թափւում են ծառերի տերևները։

Թող չ'ասեն դրացիք՝ թէ ծոյլ են Հասօյի եզները։

Սեռական յատկացուցիչը ցոյց է տալիս՝ թէ մէկ առարկայ ումն է պատկանում կամ ինչին է վերաբերում։

2. Սեռական յատկացուցիչը ոտանաւորների մէջ երբեմն յատկացեալից յետադաս է վարւում։—

Բարձր գմբէթը Հոռեկայ վանքի
Ու կամարները վեհ ապարանքի
Արեգի շողքից ոսկեզօծւեցան։

3. Գոյական յատկացուցիչը երբեմն ցոյց է տալիս առարկայի որպիսութիւնը։—

Լաւ ընդունակութեան տէր աշակերտը լաւ է սովորում։

4. Եթէ յատկացեալը զօրութեամբ է իմացւում, սեռական յատկացուցիչը ստանում է նրա յօդը և հոլովական վերջաւորութիւնը։—

Գիւղի օդը աւելի մաքուր է, քան թէ քաղաքինը (այսինքն, քան թէ քաղաքի օդը)։

Ինչպէս տեսնում ենք, այս դէպքում ը յօդից առաջ աւելանում է ն (քաղաքի+ն+ը)։

5. Գոյական յատկացուցիչը երբեմն գործ է ածւում ածականի տեղ։—

Արծաթ ջրեր։ Մանուկ հասակ։ Նրազ օրեր։

6. Սաստկութիւն ցոյց տալու համար, յոգնակի գոյականի մօտ կրկնւում է գոյական յատկացուցիչը։—

Գոյն-գոյն ծաղիկներ։ Տեսակ-տեսակ մրգեր։

7. Գոյական յատկացուցիչը թւականի հետ միասին ցոյց է տալիս քանակութիւն։—

Երեք արշին մահուդ։ Հինգ փութ ալիւր։

Մի քաժակ ջուր, ով ուզի—տուր։

8. Գոյական յատկացուցիչը, երբ արտայայտւած է կրճատւած նախադասութեան ձևով, կոչւում է բացայայտիչ։ Սա դրւում է իր բացայայտեալից և յետոյ, և առաջ։—

...Այսօր Թամրազը դաժան՝
Հայրենի հողի իշխանն անարժան,
Թուրքին ընդունել, սարքել է հանդէս։

Թիֆլիսը՝ Վրաստանի հին մայրաքաղաքը, գըտընւում է Կուրի ափին։

Կամ՝

Վրաստանի հին մայրաքաղաք Թիֆլիսը գտնւում է Կուրի ափին։

Բացայայտիչը կարող է արտայայտւել նաև մէկ

բառով. այդ դէպքում դրւում է միշտ բացայայտեալից յետոյ։—

Ազգաը Թագաւորը ընդունեց քրիստոնէութիւն։

Մասիս սարը Հայաստանում ամենաբարձրն է։

Վարժութիւն.—1. Հետևեալ օրինակներում որոշեցէք յատկացուցիչների տեսակը և ցոյց տուէք իւրաքանչիւրի համաձայնութիւնը իր յատկացեալի հետ.

Առաւօտեան, երբ երկինքը յուզած՝ իբրև կարմիր ծով՝
Դալարազարդ սարի գլխին բոընկւեցաւ ալ բոցով—
Մինարէթի գլխից հնչեց Մուհամէդի ազանը.
Յոգնած՝ չոքեց աղօթելու Շուշայ բերդի գազանը։

—

Մեծ խորհուրդ կայ այսօր բերդում։ Վշտամոլոր Թուրք խանը,
Յենւած փափուկ, թաւշէ բարձին՝ ծխում էր իր ղալեանը։
Խանի առաջ կանգնած էր մի հլու, խոնարհ մանկլաւիկ...

—

Ո՞վ է այն հէգ բանտարկեալը, այն թշւառը վիրաւոր,
Որ դառնագին հառաչանքով թնդացնում է սար ու ձոր։

—

Պըլը-Պուղին՝ Շահնազարի խեղկատակը սիրելի՝
Կանգնած էր լուռ, իբրև զազիր ու սև գործի հայելի։

2. Կազմեցէք մի քանի օրինակներ, որոնց մէջ լինեն ածական, դերբայ, դերանուն, թւական և գոյական յատկացուցիչներ։

ՀՈԼՈՎՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹԻՒՆԸ

§ 13. ՈՒՂՂԱԿԱՆ ՀՈԼՈՎ

1. Ուղղական հոլովով դրւում է ենթական։—
Մեզնից շատ առաջ կար մի թագաւոր։

2. Ուղղական հոլովով դրւում է բարդ ստորոգեալի այն մասը, որ գործ է ածւում էական բայի հետ։—

Արամն աշակերտ է։ Ղազարոսն աղքատ էր։
Մարգարիտն աշակերտուհիների մէջ առաջինն է։

3. Ուղղական հոլով են պահանջում կոչել, ընտրել, հաստատել, օծել, դառնալ, ընկնել և այլ կրաւորական ու չէզոք բայեր։—

Ռուսաստանի մայրաքաղաքը կոչւում է (կրաւ.) Պետերբուրգ։
Մատթէոս II ընտրեց (կրաւ.) և հաստատեց կաթուղիկոս 1909 թ-ին։
Դալի-Մահրասան դարձաւ (չէզոք) աբեղայ, բայց մեռաւ (չէզոք) զինւոր։
Փանահ-խանը գերի ընկաւ (չէզոք) հայերի ձեռքը։

Վարժութիւն.—Կազմեցէք մի քանի նախադասութիւններ, որոնց մէջ լինեն ուղղական հոլովով խնդիրներ հեռաւոր բայերից յետոյ՝ ասել, նշանակել, հաստատել, օծել, լինել, գնալ, գալ, մնալ։

§ 14. ՍԵՌԱԿԱՆ ՀՈԼՈՎ

1. Սեռական հոլովով գլխաւորապէս դրւում է այն գոյականը, որը միւս գոյականի համար ծառայում է, իբրև յատկացուցիչ (§ 12, 1)։—

Սարի գլխին տխուր ժպտաց
Ղարաբաղի արևը։

2. Սեռական հոլովով դրւում են նաև այն գոյականները, որոնք ցոյց են տալիս աստիճան, արժէք, ժամանակ։—

Մարդս պիտի լինի վերին աստիճանի ազնիւ։
Մեզ մօտ եկաւ մի բարձր դասակարգի մարդ։ Ես խմեցի հինգ տարւայ գինի։ Մեր գիւղից մինչև քաղաքը երկու օրւայ ճանապարհ է։

3. Սեռական հոլով են պահանջում մէջ, տակ(ին), յետեւ, առաջ, վրա, համար, հետ և ուրիշ յետադիրներ։—

Դասարանի մէջ նստած են աշակերտները։ Պատուհանիս տակ շինէ քո բունը։ Ամպերի յետեւ թաք կացաւ լուսինը։ Ուսուցչի առաջ կանգնած է աշակերտը։ Սեղանի վրա դրած է հայերէն գիրք։

Վարժութիւն։—Կազմեցէք մի քանի նախադասութիւններ, որոնց մէջ լինեն սեռական հոլովով գոյական յատկացուցիչներ։

2. Կազմեցէք մի քանի նախադասութիւններ, որոնց մէջ լինեն աստիճան, արժէք և ժամանակ ցոյց տուող սեռական հոլովով գոյականներ։

3. Կազմեցէք մի քանի նախադասութիւններ, որոնց մէջ լինեն սեռական հոլովներ մէջ, վրա, տակ, առաջ, համար, հետ յետադիրներով։

§ 15. ՏՐԱԿԱՆ ՀՈԼՈՎ

1. Տրական հոլովով դրւում է այն առարկան, որի օգտին կամ վնասին կատարւում է գործողութիւնը։—

Ա՜յ սև ամպեր, վա՜յ սև ամպեր,
Արդեօք ի՞նչ էք արտիս բերում։

—

Ողջ սրբերին մոմ եմ վառել,
Որ Աստուած օր տայ իմ արտին։

—

Ողորմութիւն արէք, պարո՛ն,
Անտուն, անտէր աղքատին։

2. Տրական հոլով են պահանջում յաղթել, տիրել, օգնել, ասել (անւանել), սպասել, զարկել, դիպչել և այլ բայեր։—

Արևն յաղթեց ամպերին։ Խաւարը տիրեց աշխարհին։ Օգնեցէք աղքատներին։ Մասիսին ասում են Արարատ։ Թշւառը սպասում է օգնութեան։ Զարկեցէք, դարբիններ, կռանը սալին։ Սարը սարին չի դիպչիլ, մարդը մարդուն կը դիպչի։

3. Տրական հոլով են պահանջում շարժում և ձգտում ցոյց տւող բայերը, երբ նրանք յայտնում են գործողութեան նպատակը։—

Աշակերտները դասերից յետոյ գնում են ճաշի։ Նախագահը հրաւիրեց անդամներին խորհրդի։ Աղւէսի դունչը խաղողին չը հասաւ, ասաց՝ խակ է։

4. Տրականը շատ անգամ ընդունելով յօդ՝ գործ է ածւում վրա և մօտ յետադիրներով սեռականի տեղ։—

Պայծառ արևը շողքը գցեց սարերին (փոխանակ՝ սարերի վրա)։

Ժամի դռանը (փոխանակ՝ դռան մօտ) կանգնած էր մի աղքատ կին։

5. Տրականը յօդով դրւում է նաև ներգոյականի տեղ, երբ նա յայտնում է գործողութեան ժամանակը։—

Դեկտեմբերին ձիւն է գալիս,
Ցունւարին ծածկում սար ու ձոր։

Գարնանը ծաղկում են ծառերը։ Իրիկնապահին գիւղացիք դաշտից գնում են տուն։ Վատ մարդը Զատկին էլ վատ կը լինի։ Խ. Աբովեանը ծնւել է 1804 թւին։

6. Տրական հոլով են պահանջում արժանի, կարօտ, ընդունակ, օգտակար, յարմար, սիրելի, ցանկալի և ուրիշ լի վերջացած որակական ածականներ։—

Մշակն արժանի է իր վարձին։
Կարօտ ենք տեսքիդ, աննման գարուն։
Մարդս ընդունակ է սխալւելու։
Լեզուներ իմանալն օգտակար է ամենիս։
Հայրենիքը սիրելի է իւրաքանչիւր մարդուն։

7. Համար, պէս, հետ, մօտ, առանց և փոխանակ յետադիրներն ու նախդիրները պահանջում են դերանուններ տրական հոլովով։—

Ինձ համար չէ գարնան գալը։ Քեզ պէս լաւ ոչ ոք չի նկարում։ Մեզ մօտ հիւրեր եկան։ Քոյրս ինձ

հետ մնաց տանը։ Էն առանց քեզ էլ կարող եմ ստանալ։

Վարժութիւն.—1. Կազմեցէք մի քանի նախադասութիւններ, որոնց մէջ լինեն տրական հոլովով խնդիրներ հետևեալ բայերից յետոյ՝ անել (բարութիւն), մօտենալ, զարկել, ցոյց տալ, ձեռք տալ, գլուխ տալ։

2. Կազմեցէք մի քանի նախադասութիւններ, որոնց մէջ տրական հոլովը դրուած լինի ներգոյականի տեղ։

3. Կազմեցէք մի քանի նախադասութիւններ, որոնց մէջ լինեն տրական հոլովով դերանուններ առանց նախդրից յետոյ և հետ, մօտ, համար, պէս յետադիրներից առաջ։

§ 16. ՀԱՅՑԱԿԱՆ ՀՈԼՈՎ

1. Հայցական հոլովով դրւում է այն առարկան, որի վրա անցնում է ենթակայի գործողութիւնը. այս պատճառով բոլոր ներգործական բայերը պահանջում են հայցական հոլով։—

Կայէն սպանեց Աբէլին։ Աշակերտը գրում է դասը։

2. Երկու հայցական հոլով են պահանջում անուանել, կոչել, ընտրել, նշանակել, հաստատել, օծել, կարգել և ուրիշ սրանց նման բայեր։—

Մատթէոս Բ-ին (հայց. հ.) 1894 թուին ընտրեցին պատրիարք (հայց. հ.), իսկ 1909 թուին հաստատեցին կաթուղիկոս (հայց հ.)։ Մեզ (հայց. հ.) Հայկի անունով կոչում են հայ (հայց. հ.)։ Անտառի կենդանիներն իրանց թագաւոր (հայց. հ.) ընտրեցին փիղը (հայց. հ.)։

3. Հայցական հոլով են պահանջում շարժում ցոյց տուող բայերը, պատասխանելով ո՞ւր հարցին։—

Աշակերտներն առաւօտեան գալիս են դպրոց, իսկ դասերից յետոյ գնում են տուն։

4. Հայցական հոլովը երբեմն դրւում է ներգոյականի տեղ։ Միայն այս դէպքում ընդունում է յօդ, եթէ հասարակ անուն է. իսկ եթէ յատուկ անուն է, գործ է ածւում առանց յօդի։—

Հիւսիսային կողմերը (փոխանակ՝ կողմերում) սաստիկ ցրտեր են լինում։ Շիրւանզադէն ծնւել է Շամախի (փոխանակ՝ Շամախում)։

5. Հայցական հոլով են պահանջում այն բառերը, որոնք ցոյց են տալիս ժամանակ։—

Մարդիկ ցերեկն աշխատում են, գիշերը հանգստանում։ Պետրոս Մեծը թագաւորեց քառասուն և երեք տարի։

6. Հայցական հոլով են պահանջում բաղդատական ածականները քան թէ կամ քան բառերից յետոյ։—

Մասիսն աւելի բարձր է, քան թէ Արագածը։ Պետերբուրգն աւելի մեծ է, քան Թիֆլիզը։

7. Դէպի, մինչև նախդիրները պահանջում են հայցական հոլով։—

Դէհ, սիրուն ծիծեռնակ,
Հեռացիր, թռիր արագ
Դէպի հայոց երկիրը,
Ծնւած տեղս—Աշտարակ։

—

Լուսաբերը մինչեւ այգ
Զրիս միջին էր լողում։

Վարժութիւն։—1. Կազմեցէք մի քանի նախադասութիւններ, որոնց մէջ լինեն հայցական հոլովով խնդիրներ ներգործական բայերից յետոյ։

2. Կազմեցէք մի քանի նախադասութիւններ, որոնց մէջ լինեն խնդիրներ երկու հայցական հոլովով օծել, կարգել, նշանակել, ընտրել և այլ սրանց նման բայերից յետոյ։

3. Կազմեցէք մի քանի նախադասութիւններ, որոնց մէջ լինի հայցական հոլով շարժում ցոյց տուող բայերից, ժամանակ ցոյց տուող բառերից, բաղդատական ածականներից և ղէպի ու մինչեւ նախդիրներից յետոյ։

§ 17. ԲԱՑԱՌԱԿԱՆ ՀՈԼՈՎ

1. Բացառական հոլով են պահանջում շատ կրաւորական բայեր։—

Բէլ սպանուեց Հայկից։ Մարդս ճանաչուում է իր գործերից։

2. Բացառական հոլով են պահանջում գործողութեան ուղղութիւնը ցոյց տուող բայերը, պատասխանելով ումից, ինչից, որտեղից հարցերին։—

Քոյրը եղբօրից ստացաւ նամակ։

—

Ինչո՞ւ արցունք ցայտում են
Քո սէգ, հպարտ աչերից,
Ինչո՞ւ արագ փախչում ես
Այդ հարազատ ափերից։

3. Բացառական հոլով են պահանջում շինել, կազմել, կառուցանել և ուրիշ բայեր, որոնք ցոյց են տալիս՝ թէ ի՞նչ նիւթից է շինուում առարկան։—

Սեղանը շինում են փայտից։ Պալատները կառուցանում են կոփածոյ քարից։

4. Բացառական հոլով են պահանջում անորոշ ու որոշեալ դերանունները և թուական անունները։—

Կովը, ձին ու շունը վիճում էին՝ թէ նրանցից որի՞ն աւելի է սիրում տէրը։ Կենդանիներից իւրաքանչիւրն ունի իր տեղը և սիրելի է իր տիրոջ։ Կոյսերից հինգը յիմար էին, հինգը՝ իմաստուն։

5. Բացառական հոլով են պահանջում բաղդատական և դերադրական աստիճանի ածականները։—

Արաքսն աւելի խելօք է Հայկից։ Առիւծը կենդանիներից ամենազօրեղն է։

6. Բացառական հոլով են պահանջում մի քանի չէզոք բայեր, երբ հարկաւոր է յայտնել գործողութեան կամ դրութեան պատճառը։—

Ձմեռը ջուրը սառչում է ցրտից։

7. Բացառական հոլով են պահանջում վախենալ, դաղարել, ձանձրանալ և այլ բայեր։—

Վախեցիր կանգնած ջրից։

8. Բացի նախդիրը և մակբայներից առնուած յետոյ, յետ, առաջ յետադիրները պահանջում են բացառական հոլով։—

Մեր պարտիզում բացի վարդից կան և ուրիշ հոտաւէտ ծաղիկներ։ Դարունքից յետոյ գալիս է ամառը։ Խօսելուց առաջ պէտք է մտածել։

Վարժութիւն.—1. Կազմեցէք մի քանի նախադասութիւններ, որոնց մէջ լինի բացառական հոլով կրաւորական բայերից յետոյ։

2. Կազմեցէք մի քանի նախադասութիւններ, որոնց մէջ լինեն բացառական հոլովով խնդիրներ գործողութեան ուղղութիւնը ցոյց տուող բայերից (ո՞ւմից, ո՞րտեղից), անորոշ ու որոշեալ դերանուններից և թուական անուններից առաջ։

3. Կազմեցէք մի քանի նախադասութիւններ, որոնց մէջ լինեն բացառական հոլովով խնդիրներ բաղդատական ու գերադրական աստիճանի ածականներից, դադարել ու ծանօրանալ բայերից, բացի նախդրից յետոյ և առաջ, յետոյ յետադիրներից առաջ։

§ 18. ԳՈՐԾԻԱԿԱՆ ՀՈԼՈՎ

1. Գործիական հոլովով դրւում են այն անունները, որոնք ցոյց են տալիս գործիք կամ միջոց, պատասխանելով ումնով, ինչով հարցերին։—

Գրատախտակի վրա գրում են կաւիճով։ Խոտը հնձում են մանգաղով։ Ծնողները մխիթարւում են իրանց զաւակներով։

2. Գործիական հոլով են պահանջում այն անունները, որոնք ցոյց են տալիս առարկաների և նրանց գործողութեան որպիսութիւնը։—

Մեզնից շատ առաջ կար մի թագաւոր,
Հոգով դեռ արի, գլխով ալևոր։

—

Գարուն է եկել նախշուն թեւերով,
Նախշուն թեւերով, պէս-պէս ծեւերով։

—

Կէս գիշերին գեղ լուսինը՝
Ամպերի մէջ լողալով,

Հանդարտ ու վեհ ընթանում էր՝
Արծաթի պէս շողալով։

3. Գործիական հոլովով դրւում են այն անունները, որոնք ցոյց են տալիս ազգ, ցեղ, ծագում և կոչում։—

Հայր Ղևոնդ Ալիշանը ազգով հայ էր, կրօնով՝ կաթոլիկ։ Դալի-Մահրասան կոչումով հոգևորական էր։

4. Գործիական հոլովով են դրւում այն անունները, որոնք ցոյց են տալիս գործողութեան ժամանակը։—

Ժամանակով կատուն ճոն էր,
Շունն էլ գլխին գտակ չ՚ունէր։

—

Ուրիշները մեծանում էին տարով, բայց Սասունցի Դաւիթը մեծանում էր օրով ու ժամով։

Ծանօթ.—Կան ժամանակ ցոյց տուող անուններ, որոնք անխտիր պահանջում են և գործիական, և հայցական։—

Մարդիկ ցերեկով աշխատում են, գիշերով հանգստանում։

Այս օրինակը կարելի է փոխել այսպէս—

Մարդիկ ցերեկն աշխատում են, գիշերը հանգստանում (§ 16, 5)։

5. Գործիական հոլովով են դրւում այն անունները, որոնք ցոյց են տալիս առարկայի շարժողութեան ճանապարհը կամ տեղի տարածութիւնը։—

Մարդիկ ճանապարհորդում են ծովով ու ցամաքով։ Մայր Արաքսի ափերով քայլամոլոր գնում եմ։ Դասարանի երկարութեամբ դրւած են նստարանները։ Փողոցի լայնութեամբ ջուր էր հոսում։

6. Գործիական հոլովով են դրւում երբեմն նաև մէջ, տակ, վրա և մի քանի ուրիշ գոյականից և մակբայից առնւած յետադիրներ, երբ նրանք ցոյց են տալիս առարկայի շարժողութեան ճանապարհը։—

Առուն հոսում էր անտառի միջով,
Կանաչ թփերի, ծառերի տակով։

—

Ամպերի միջին տխուր ժպտալով՝
Լողում էր լուսին երկնքի վրայով։

Վարժութիւն։—1. Կազմեցէք մի քանի նախադասութիւններ, որոնց մէջ լինեն գործիական հոլովով անուններ՝ ա) գործիք կամ միջոց ցոյց տւող, բ) որպիսութիւն, ազգ, ցեղ, ծագում ու կոչում ցոյց տւող և գ) ժամանակ, շարժողութեան ճանապարհ կամ տեղի տարածութիւն ցոյց տւող։

2. Կազմեցէք մի քանի նախադասութիւններ, որոնց մէջ լինեն գործիական հոլովով գոյականից ու մակբայից առնւած յետադիրներ՝ մէջ, տակ, ներքև, վերև և այլն։

§ 19. ՆԵՐԳՈՅԱԿԱՆ ՀՈԼՈՎ

1. Ներգոյական հոլովով դրւում են այն անունները, որոնք ցոյց են տալիս գործողութեան կամ դրութեան տեղը։—

Թառամում եմ ես այս օտար երկրումը,
Մենակ բրսած ծաղկի նման դաշտումը։

2. Ներգոյական հոլովով են դրւում այն անունները, որոնք ցոյց են տալիս գործողութեան ժամանակամիջոցը։—

Աստւած ստեղծեց աշխարհը վեց օրում։

—

Իր կեանքումը նա չը գիտէր՝
Թէ ինչ բան է կարիքը։

§ 20. ԿՈՉԱԿԱՆ ՀՈԼՈՎ

Կոչական հոլովով դրւում է այն առարկան, որին դիմում է խօսողը։—

Գնա, որդեակ, աշխարհս անցիր,
Պանծալի անուն մեծի դու ստացիր։

Վարժութիւն։—1. Կազմեցէք մի քանի նախադասութիւններ, որոնց մէջ լինեն ներգոյական հոլովով տեղ և ժամանակամիջոց ցոյց տւող անուններ։

2. Կազմեցէք մի քանի նախադասութիւններ, որոնց մէջ լինեն կոչական հոլովով անուններ։

3. Հետևեալ օրինակների մէջ որոշեցէք, թէ ինչ բառ ինչ հոլովով է գործ ածւած ու թէ ինչու.

Ո՜վ լուսին, լուսին, էլ քանի էդպէս
Դալկացած, տժգոյն, տխուր երևես.
Այդ թըխպոտ ամպերն քեզ զարհուրեցրին,
Բոցոտ կայծակներն քեզ այլայլեցին.
Երկնից կամարի գեղը դու ես լոկ.
Աստեղց մէջ չը կայ քեզ նման ոչ ոք,
Մթթէ նախանձից թափել ես գոյնըդ,
Չէ, ուրիշ գաղտնիք ունիս սրտումըդ։

—

Հերիքնաղ երկար իր խօսքով անդոր
Յուսահատ հարսին կարդում էր յորդոր,
Արցունքն աչքին աղերսում նորան
Զը թողնել տունը, խընայել մանկան։

II

ՆԱԽԱԴԱՍՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԿԱՊԱԿՑՈՒԹԻՒՆԸ

§ 21. Նախադասութիւնները կապակցւում են միմեանց հետ երկու եղանակով՝ 1) ստորնադրական (способъ подчиненія) և 2) շարադրական (способъ сочиненія).

ՍՏՈՐԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹԻՒՆ

§ 22. Ստորադրական եղանակով կապակցւում են միմեանց հետ գլխաւոր (главное) և երկրորդական (придаточное) նախադասութիւնները։

Գլխաւոր կոչւում է այն նախադասութիւնը, որից կախում ունի ուրիշ նախադասութիւն։

Երկրորդական կոչւում է այն նախադասութիւնը, որ կախում ունի գլխաւորից և կազմում է նրա համար գլխաւորապէս կամ յատկացուցիչ, կամ լրացուցիչ, կամ թէ պարագայական խօսք։—

Մանիր թելեր հաստ ու բարակ,
Որ ես հոգամ իմ ցաւեր։

Այս օրինակում Մանիր թելեր հաստ ու բարակ գլխաւոր նախադասութիւն է. Որ ես հոգամ իմ ցաւեր՝

երկրորդական, որովհետև վերջինս կախում ունի առաջինից և ծառայում է նրա համար, որպէս նպատակ ցոյց տուող պարագայական խօսք, պատասխանելով ինչո՞ւ հարցին։

Երկրորդական նախադասութիւնները լինում են՝ յատկացուցիչ, լրացուցիչ և պարագայական։—

Այն գետը, որ անցնում է Թիֆլիսի միջով, կոչւում է Կուր։

Որդին լսում է, ինչ որ ասում են ծնողները։

Որտեղ կայ սէր, այնտեղ կայ միաբանութիւն։

Այս օրինակներում որ անցնում է Թիֆլիսի միջով երկրորդական յատկացուցիչ նախադասութիւն է, որովհետև գլխաւոր նախադասութեան համար ծառայում է յատկացուցիչ. ո՞ր գետն է կոչւում Կուր— որ անցնում է Թիֆլիսի միջով։ Ինչ որ ասում են ծնողները երկրորդական լրացուցիչ նախադասութիւն է, որովհետև լրացնում է գլխաւոր նախադասութեան ստորոգեալի միտքը. ի՞նչ է լսում որդին—ինչ որ ասում են ծնողները։ Իսկ Որտեղ կայ սէր երկրորդական պարագայական նախադասութիւն է, որովհետև գլխաւոր նախադասութեան համար ծառայում է, որպէս տեղ ցոյց տուող պարագայ. որտեղ կայ միաբանութիւն—որտեղ կայ սէր։

§ 23. Կան նաև երկրորդական ենթակայ և ստորոգեալ նախադասութիւններ։—

Ով որ փքանայ, շուտով չքանայ։
Յայտնի է, որ երկիրս կլոր է։
Այս տունն այնպէս է, որ շուտով պիտի քանդի։
Այս օրինակների մէջ՝ Ով որ փքանայ, որ եր-

կիրս կլոր է երկրորդական ենթակայ նախադասութիւններ են, որովհետև գլխաւոր նախադասութիւնների համար ծառայում են, որպէս ենթակայ, և պատասխանում են ո՞վ և ինչ հարցերին. ով շուտով չքանայ—ով որ փքանայ. ինչն է յայտնի—որ երկիրս կլոր է։ Իսկ որ շուտով պիտի քանդուի երկրորդական ստորոգեալ նախադասութիւն է, որովհետև գլխաւոր նախադասութեան համար ծառայում է, որպէս ստորոգեալ և պատասխանում է ինչպէս է հարցին. այս տունն ինչպէս է—որ շուտով պիտի քանդուի։

Վարժութիւն.—1. Հետևեալ օրինակների մէջ որոշեցէք երկրորդական նախադասութիւնները ու նրանց տեսակը.

Հէնց Ամիրանի անունը լսեց, հովիւն իսկոյն երկիւղից ցնցուեց։ Տեսնելով նորա դառը տանջանքը, հովիւը յայտնեց իր համակրանքը։

Սագիկ-մագիկ, ես քեզ կը տամ քաղցր կուտիկ, որ դու ուտես։ Ես կը խնդրեմ իմ մայրիկին, որ նա ժողովք քո փետուրներ։ Այն տունը, որ երևում է հեռուում, մերն է։ Աքլորը մի օր կտուրը բարձրացաւ, որ աշխարհք տեսնի։ Ծառան յայտնեց, որ եկել են հիւրերը։ Խնդրեմ ասացէք, որ ժամն է։ Մինչև Շուշանը զարդարուի, ժամը դուրս կը գայ։ Աշակերտները մտնում են դպրոց, որպէս զի ուսում առնեն։ Կան մարդիկ, որոնք չեն հասկանում ուսման նշանակութիւնը։

2. Կազմեցէք իւրաքանչիւր տեսակից մի քանի երկրորդական նախադասութիւններ։

§ 24. ՅԱՏԿԱՑՈՒՑԻՉ ՆԱԽԱԴԱՍՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԿԱՊԱԿՑՈՒԹԻՒՆԸ

Յատկացուցիչ նախադասութիւնները կապակցւում են գլխաւորի հետ որ, ով, ով որ դերանուններով, որոնց գլխաւոր նախադասութեան մէջ պատասխանում են ակնյայտնի կամ զօրութեամբ իմացւող այն, այնպիսի, նա դերանունները։—

Այն գետը, որ անցնում է Թիֆլիսի միջով, կոչւում է Կուր։ Ազնուութիւնը մի (այնպիսի) արժանիք է, որ չ'ունեն շատերը։ Ես նա եմ, որին ամբողջ Վրաստան վաղուց յիշում է, կոչում Ամիրան։ Ով որ փքանայ, (նա) շուտով չքանայ։

Ինչպէս տեսնում ենք, որ դերանունը դրւում է այն հոլովով ու թւով, ինչ պահանջում է երկրորդական նախադասութեանը։

Որ դերանունը յատկացուցիչ նախադասութեան մէջ երբեմն փոխարինւում է ուր և երբ մակբայներով, երբ հարկ է ցոյց տալ տեղ կամ ժամանակ։—

Այն երկիրը, ուր մենք ապրում ենք, կոչւում է Կովկաս։ Կար ժամանակ, երբ Անին շէն ու հարուստ քաղաք էր։

Վարժութիւն.—Կազմեցէք մի քանի երկրորդական յատկացուցիչ նախադասութիւններ։

§ 25. ՅԱՏԿԱՑՈՒՑԻՉ ՆԱԽԱԴԱՍՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԿՐՃԱՏՈՒՄԸ

Յատկացուցիչ նախադասութիւնները կրճատւում են՝

ա) Գոյական անունի օգնութեամբ, երբ նրանց ստորոգեալն արտայայտուած է գոյական անունով ու օժանդակ բայով։—

Պետրոս Մեծը, որը Ռուսաստանի թագաւորն էր, յաղթեց Շուեդացիներին։

Այստեղ որը Ռուսաստանի թագաւորն էր յատկացուցիչ նախադասութիւնը կրճատւելով՝ կորցնում է իր նախադասութեան ձևը և դառնում է բացայայտիչ։—

Պետրոս Մեծը՝ Ռուսաստանի թագաւորը՝ յաղթեց Շուեդացիներին։

բ) Ածական անունի օգնութեամբ, երբ ստորոգեալն արտայայտուած է ածական անունով ու օժանդակ բայով։—

Այն մարդը, որ բարի է, սիրելի է ամենքին։ Որ բարի է յատկացուցիչ նախադասութիւնը կրճատւելով՝ կորցնում է իր նախադասութեան ձևը և դառնում է ածական յատկացուցիչ բառ։—

Բարի մարդը սիրելի է ամենքին։

գ) Դերբայի օգնութեամբ, երբ ստորոգեալն արտայայտուած է սահմանական եղ. բայով։—

Այն աշակերտը, որ աշխատում է, միշտ առաջ է գնում։

Այստեղ՝ որ աշխատում է յատկացուցիչ նախադասութիւնը կրճատւելով՝ դառնում է ներկայ դերբայով յատկացուցիչ բառ։—

Աշխատող աշակերտը միշտ առաջ է գնում։

Երբ կրճատւելուց յետոյ, յատկացուցիչ նախադասութեան տեղ ստացւում է անցեալ կամ ապառնի դերբայ, նրա ենթական, եթէ գոյական է, դառնում է սեռական յատկացուցիչ, իսկ եթէ դերանուն է՝ ստացական յատկացուցիչ։—

Այն գառը, որ պահել է Աստուած, գայլը չի տանիլ։

Այն գիրքը, որ դու պիտի տաս ինձ, արդէն կարդացել եմ։

Որ պահել է Աստուած, որ դու պիտի տաս ինձ նախադասութիւնները կրճատւելուց յետոյ, նրանց տեղ ստացւում են անցեալ և ապառնի դերբայներ։—

Աստուծոյ պահած գառը գայլը չի տանիլ։

Քո ինձ տալու գիրքն արդէն կարդացել եմ։

Ինչպէս տեսնում ենք, առաջին նախադասութեան ենթական (Աստուած)՝ լինելով գոյական, դառնում է սեռական յատկացուցիչ (Աստուծոյ). իսկ երկրորդ նախադասութեան ենթական (դու)՝ լինելով դերանուն, դառնում է ստացական յատկացուցիչ (քո)։

§ 26. Յատկացուցիչ նախադասութիւնները չեն կրճատւում՝

1) Երբ յարաբերական դերանունը դրուած է ոչ ուղղական, ոչ էլ հայցական, այլ ուրիշ հոլովով։—

Այն գիրքը, որից արտագրում եմ դասս, հայերէն է։ Այն աշակերտը, որին մօտենում եմ, իմ ընկերն է։

Այս օրինակներում յատկացուցիչ նախադասութիւնները չի կարելի կրճատել, որովհետև յարաբերական դերանունը մէկի մէջ դրուած է բացառական, իսկ միւսի մէջ տրական հոլովով։

2) Երբ ստորոգեալ բայը դրուած է ստորադասական եղանակով։—

Գազանները որոնում են այնպիսի տեղեր, որ կարողանան ապահով ապրել։

Վարժութիւն.—Կրճատեցէք հետևեալ երկրորդական յատկացուցիչ նախադասութիւնները.

Արևամանուկը, որն արդէն տասնուհինգ տարեկան էր դարձել, չէր ազատւել իր ծնողների հսկողութիւնից։ Բայց ինչո՞ւ լացեց այդ արի մարդը, որին անծանօթ էր ահն ու դարդը։ Գուցէ թէ յիշե՞ց նա այդ րոպէին տանն անպաշտպան թողած ընտանին, որ շուտով կ'ընկնի ձեռքը թշնամուն։ Ես նա եմ, որից զրկւած է շատ մարդ։ Ես նա եմ, որ միշտ այս բոլոր բարիք պահում է, խնամում։ Մենք անցանք մարգագետնով, որ ծածկւած էր բարձր խոտով։ Յովհաննէսը, որն իմ ամենամօտ ընկերն է, երէկ եկաւ մեզ մօտ։ Աբգարը, որը Հայոց թագաւոր էր, ընդունեց քրիստոնէութիւնը։

§ 27. ԼՐԱՑՈՒՑԻՉ ՆԱԽԱԴԱՍՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԿԱՊԱԿՑՈՒԹԻՒՆԸ

Լրացուցիչ նախադասութիւնները կապակցւում են գլխաւորի հետ ինչ, ինչ որ, որ դերանուններով և թէ, որ շաղկապներով, որոնց գլխաւոր նախադասութեան մէջ ակնյայտնի կամ զօրութեամբ պատասխանում են այն, նա ցուցական դերանունները։—

Ինչ կը ցանես, այն կը հնձես։
Բաւականացիր նրանով, ինչ որ ունես։
Դու պատմէ՝ թէ ինչպէս
Աստ անտէր ու խեղճ եմ ես։

Օտարի խօսքերը, որոնք ունեն լրացուցիչ նախադասութեան միտք, ոչ մի բառով չեն կապւում գլխաւոր նախադասութեան հետ, այլ բաժանւում են նրանից միջակէտով և չակերտներով։—

Կոյր ծնւած մի մարդ հարցրեց մէկին. «Ինչ գոյն ունի կաթը»։

Բայց երբ խօսողի սեպհական բառերի տեղ՝ մէջ է բերւում միայն նրանց բովանդակութիւնը, միջակէտի և չակերտների փոխարէն դրւում է թէ կամ որ շաղկապը։—

Կոյր ծնուած մի մարդ հարցրեց մէկին՝ թէ ինչ գոյն ունի կաթը։

Վարժութիւն։—Կազմեցէք մի քանի երկրորդական լրացուցիչ նախադասութիւններ։

§ 28. ԼՐԱՑՈՒՑԻՉ ՆԱԽԱԴԱՍՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԿՐՃԱՏՈՒՄԸ

Լրացուցիչ նախադասութիւնները կրճատւում են՝

ա) Գոյական անունի օգնութեամբ։—

Ինձ յայտնեցին, թէ եղբայրս գալիս է։

Այստեղ թէ եղբայրս գալիս է լրացուցիչ նախադասութիւնը կրճատուելով՝ կորցնում է իր նախադասութեան ձևը և դառնում է գոյական անուն։—

Ինձ յայտնեցին եղբօրս գալուստը։

Ինչպէս տեսնում ենք, այս դէպքում երկրորդական նախադասութեան շաղկապը (թէ) կորչում է, իսկ ենթական (եղբայրս) դառնում է յատկացուցիչ (եղբօրս)։

բ) Անորոշ և անցեալ դերբայների օգնութեամբ։—

Լաւ մարդն ուզում է, որ ամենքին լաւութիւն անի։ Ինչ կը ցանես, այն կը հնձես։

Այս երկրորդական լրացուցիչ նախադասութիւնները կրճատուելով՝ դառնում են դերբայներ։—

Լաւ մարդն ուզում է ամենքին լաւութիւն անել։ Ցանածդ կը հնձես։

Ինչպէս տեսնում ենք, այստեղ էլ երկրորդական նախադասութիւնների շաղկապները (որ, ինչ)

կորչում են։ Իսկ երկրորդ օրինակի մէջ, բացի երկրորդական նախադասութեան շաղկապից, կորչում է նաև գլխաւոր նախադասութեան այն բառը։

Վարժութիւն։—Կրճատեցէք հետևեալ երկրորդական լրացուցիչ նախադասութիւնները.

Երեխան տեսնում էր, որ հայրը կարդալիս ակնոց էր դնում աչքերին։ Երեխան խնդրեց հօրը, որ իր համար էլ ակնոց առնի։ Հայրը հասկացաւ՝ թէ ինչ է որդու միտքը։ Նա վճռեց, որ առնի որդու համար այբբենարան։ Ինչոր ասաց հայրը, որդին կատարեց։ Որդին պատմեց հօրը այն ամենը, ինչոր կարդաց գրքում։

§ 29. ՊԱՐԱԳԱՅԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԿԱՊԱԿՑՈՒԹԻՒՆԸ

ա) Տեղական պարագայական նախադասութիւնները կապակցւում են գլխաւորի հետ ուր(որ) կամ որտեղ, որտեղից և այլն մակբայներով, որոնց գլխաւոր նախադասութեան մէջ ակնյայտնի կամ զօրութեամբ պատասխանում են այնտեղ, այնտեղից և այլն մակբայները։—

Որտեղ կայ սէր, այնտեղ կայ միութիւն։
Որտեղ՝ հաց, այնտեղ կաց։
Գնա (այնտեղ), ուր որ կամենաս։

բ) Ժամանակական նախադասութիւնները կապակցւում են գլխաւորի հետ երբ(որ), հէնց(որ), թէ չէ, հազիւ թէ, քանի որ, նախ քան բառերով, որոնց գլխաւոր նախադասութեան մէջ ակնյայտնի կամ զօրութեամբ պատասխանում են այն ժամանակ, իսկոյն, միշտ և այլն։—

Երբ լուսանում է, (այն ժամանակ) մարդիկ զարթնում են։

—

Երբ որ ամեն բան պատրաստեց կարգին,
(Այն ժամանակ) Գնաց արքունիք տաւիղը ձեռքին։

—

Գարունը գալիս է թէ չէ, (իսկոյն) գիւղացիք սկսում իրանց գործը։

—

Քանի որ իմ զաւակունք
Այսպէս կը մնան պանդուխտ,
Ինձ միշտ սգւոր կը տեսնէք։

—

Նախ քան կը խօսես, մի լաւ մտածիր։

գ) Որակական նախադասութիւնները կապակցւում են գլխաւորի հետ ինչպէս (որ) կամ որպէս մակբայով, որին գլխաւոր նախադասութեան մէջ ակընյայտնի կամ զօրութեամբ պատասխանում է այնպէս մակբայը։—

Գրէ այնպէս, ինչպէս խօսում են։ Սիրեր քո հայրենիքը, ինչպէս քո նախնիքներն են սիրել։

դ) Քանակական նախադասութիւնները կապակցւում են գլխաւորի հետ որքան կամ ինչքան, որչափ մակբայներով, որոնց գլխաւոր նախադասութեան մէջ ակնյայտնի կամ զօրութեամբ պատասխանում են այնքան, այնչափ մակբայները։—

Մարդ, որքան կարող է, (այնքան) պիտի օգնի ուրիշներին։

ե) Պատճառ և նպատակ ցոյց տուող նախադասութիւնները կապակցւում են գլխաւորի հետ որովհետեւ, որպէս զի, որ շաղկապներով։—

Ձմեռը սառչում է ջուրը, որովհետեւ ցուրտ է լինում։ Աշակերտները մտնում են դպրոց, որպէս զի ուսում առնեն։ Մարդիկ ապրում են, որ օգնեն իրար։

Վարժութիւն։—Կազմեցէք մի քանի երկբորդական պարագայական նախադասութիւններ։

§ 30. ՊԱՐԱԳԱՅԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԿՐՃԱՏՈՒՄԸ

Պարագայական նախադասութիւնները կրճատելով՝ կորցնում են իրանց շաղկապները և դառնում են հասարակ պարագայական բառեր։

ա) Տեղական նախադասութիւնները կրճատւում են ղերբայի և տեղ գոյականի օգնութեամբ։—

Գնա՛, ուր որ կամենաս։

Որտեղ՝ հաց, այնտեղ կա՛ց։

Այս նախադասութիւնները կրճատելով՝ դառնում են—

Գնա՛ կամեցած տեղը։

Կա՛ց հաց եղած տեղում։

բ) Ժամանակական նախադասութիւնները կրճատւում են՝

1. Դերբայի և պէս բառի օգնութեամբ։—

Երբ լուսանում է, մարդիկ զարթնում են։

Այս նախադասութիւնը կրճատելով՝ դառնում է—

Լուսանալուն պէս մարդիկ զարթնում են։

2. Անորոշ ղերբայի բացառ. հոլովի և յետոյ բառի օգնութեամբ։—

Երբոր ամեն բան պատրաստեց կարգին,

Գնաց արքունիք տաւիղը ձեռքին։

Այս նախադասութիւնը կրճատելով՝ դառնում է—

Ամեն բան կարգին պատրաստելուց յետոյ գնաց արքունիք տաւիղը ձեռքին։

3. Անորոշ ղերբայի սեռ. հոլովի և ժամանակ բառի օգնութեամբ։—

Երբ անձրեւ է կաթկաթում, հովիւն անուշ քնի մէջ քաղցր երազ է տեսնում։

Այս նախադասութիւնը կրճատելով՝ դառնում է—

Անձրև կաթկաթելու ժամանակ հովիւն անուշ քնի մէջ քաղցր երազ է տեսնում։

Անձրեւ կաթկաթելու ժամանակ ձևը կարելի է է փոխարինել՝ անձրեւ կաթկաթելու միջոցին կամ անձրեւ կաթկաթելիս։

գ) Որակական նախադասութիւնները կրճատւում են սեռական հոլովի և պէս կամ նման բառի օգնութեամբ։—

Գրէ՛ այնպէս, ինչպէս խօսում են։

Սիրի՛ր հայրենիքդ, ինչպէս քո նախնիքներն են սիրել։

Այս նախադասութիւնները կրճատելով՝ դառնում են—

Գրէ՛ խօսելու պէս։

Սիրի՛ր հայրենիքդ քո նախնիքների նման։

դ) Քանակական նախադասութիւնները կրճատւում են սեռական հոլովի և չափ բառի օգնութեամբ։—

Մարդ, որքան կարող է, պիտի օգնի ուրիշներին։

Այս նախադասութիւնը կրճատելով՝ դառնում է—

Մարդ իր կարողացածի չափ (կամ կարողութեան չափ) պիտի օգնի ուրիշներին։

Ստացական իր դերանունը այստեղ կարելի է փոխարինել ն (ը) յօդով։—

Մարդ կարողացածին չափ պիտի օգնի ուրիշներին։

ե) Պատճառ ցոյց տուող նախադասութիւնները կրճատւում են բացառական հոլովի օգնութեամբ։—

Ձմեռը սառչում է ջուրը, որովհետև ցուրտ է լինում։

Այս նախադասութիւնը կրճատելով՝ դառնում է—

Ձմեռը սառչում է ջուրը ցրտից։

Այս ձևը կարելի է փոխարինել—

Ձմեռը սառչում է ջուրը ցրտի պատճառով։

Նպատակ ցոյց տուող նախադասութիւններ կըրճատւում են դերբայի օգնութեամբ։—

Աշակերտները մտնում են դպրոց, որպէս զի ուսում առնեն։

Այս նախադասութիւնը կրճատելով՝ դառնում է—

Աշակերտները մտնում են դպրոց ուսում առնելու։

Առնելու դերբային կարելի է աւելացնել համար յետադիրը—

Աշակերտները մտնում են դպրոց ուսում առնելու համար։

Վարժութիւն.—Կրճատեցէք հետևեալ երկրորդական պարագայական նախադասութիւնները.

Հազիւ թէ ծովի ափին էր հասած, իր սիրուն քրոջ գլորեց նա ցած։ Հէնց Ամիրանի անունը լսեց, հովիւն խսկոյն երկիւղից ցնցւեց։ Եկել եմ այնեղից, որտեղից որ եկել են մերոնք։ Արդէն զօրացած էր Արևամանուկը, երբ սկսեց տաւար գնալ։ Երբ գորտը տեսաւ եղան, նախանձեց նրա խոշորութեան։ Գորտն սկսեց փքւել, որպէս զի հաւասարւի եղան։ Մինչև հասատը կը բարակի, բարակի հոգին դուրս կը գայ։ Հէնց որ լուսանում է, զարթ-

նում է աշխարհ։ Արևը մայր էր մտնում, երբ մենք հասանք գիւղը։ Մեր կառապանն անդադար մտրակում էր ձիաներին, որովհետև ուզում էր մեզ շուտ տեղ հասցնել։ Երբ անցանք գետը, հեռւից երևաց գիւղը։

§ 31. ԵՆԹԱԿԱՅ ԵՒ ՍՏՈՐՈԳԵԱԼ ՆԱԽԱԴԱՍՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԿԱՊԱԿՑՈՒԹԻՒՆԸ

ա) Երկրորդական ենթակայ նախադասութիւնները կապակցւում են գլխաւորի հետ ով կամ ով որ դերանունով և որ կամ թէ շաղկապներով, որոնց գլխաւոր նախադասութեան մէջ ակնյայտնի կամ զօրութեամբ պատասխանում են նա, այն ցուցական դերանունները։—

Ով աշխատում է, նա բարիք է վայելում։

Յայտնի է, որ երկիրս կլոր է։

բ) Երկրորդական ստորոգեալ նախադասութիւնները կապակցւում են գլխաւորի հետ որ, ինչ որ, ինչպէս բառերով, որոնց գլխաւոր նախադասութեան մէջ ակնյայտնի կամ զօրութեամբ պատասխանում են այն, նոյն, այնպէս բառերը։—

Այս տունն այնպէս է, որ շուտով պիտի քանդւի։

Այս այն է, ինչ որ ինձ տւել ես։

Վարժութիւն։—Կազմեցէք մի քանի երկրորդական ենթակայ ու ստորոգեալ նախադասութիւններ։

§ 32. ԵՆԹԱԿԱՅ ԵՒ ՍՏՈՐՈԳԵԱԼ ՆԱԽԱԴԱՍՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԿՐՃԱՏՈՒՄԸ

Ենթակայ և ստորոգեալ նախադասութիւնները, միւս երկրորդական նախադասութիւնների նման՝

կրճատելիս կորցնում են իրանց շաղկապները։

ա) Ենթակայ նախադասութիւնները կրճատւում են դերբայի, գոյականի կամ այլ բառի օգնութեամբ։—

Ով աշխատում է, նա բարիք է վայելում։

Յայտնի է, որ երկիրս կլոր է։

Այս նախադասութիւնները կրճատելով՝ դառնում են—

Աշխատողը բարիք է վայելում։

Յայտնի է երկրիս կլորութիւնը։

Ինչպէս տեսնում ենք երկրորդ օրինակից, գոյականի օգնութեամբ կրճատելիս՝ երկրորդական նախադասութեան ենթական (երկիրս) դառնում է սեռական յատկացուցիչ (երկրիս)։

բ) Ստորոգեալ նախադասութիւնները կրճատւում են դերբայի օգնութեամբ։—

Այս տունն այնպէս է, որ շուտով պիտի քանդուի։

Այս այն է, ինչ որ ինձ տուել ես։

Այս նախադասութիւնները կրճատելով՝ դառնում են—

Այս տունը շուտ քանդուելու է։

Այս է ինձ տուածդ։

Վարժութիւն։—1 Կրճատեցէք հետևեալ երկրորդական ենթակայ և ստորոգեալ նախադասութիւնները.

Միշտ քաղցր է այն, ինչոր անցել է։ Հզօրի առաջ միշտ մեղաւոր է նա, ով որ անզօր է։ Զուր չի ասւում, թէ մի ձեռքը ծափ չի տալ։ Մինչև առաւօտ լսելի էր, թէ ինչպէս էր գոռում փոթորիկը։ Խնձոր չէ այն ամենը, ինչ որ կլոր է։ Քո տեսածն այն չէ, ինչ որ ես եմ տեսել։ Մարդս ոչ

այլ ինչ է, եթէ ոչ մահկանացու։ Աշխատասիրութեան կողմից Արամը նոյնն է, ինչ՝ Լևոնը։

2. Հետևեալ կրճատւած նախադասութիւնները դարձրէք լիակատար.

Պատմէ՛ շատերուն Վարդանի մահը։ Քեզ ուժ կը տան Մասիսի քաջքը քաջ Վարդան լինելու։ Մէջքիդ կը կապեմ իմ ձեռքով սրած թուր։ Մեր բակումը քեզ անհամբեր սպասող ձի է կանգնած։ Տէր բեհեզեայ մեզ ձեր շալիկը փաթաթելու մեր մարմնի վերքը։ Խնդալու ժամանակ, բարեկամ, երգէ երգ դու ցնծութեան։

ՇԱՐԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹԻՒՆ

§ 33. Շարադրական եղանակով կապակցւում են միմեանց հետ ինքնուրոյն նախադասութիւնները, որոնք քերականօրէն իրարից կախում չունեն և որոնցից իւրաքանչիւրը մի առանձին միտք է պարունակում իր մէջ։ Այդ անկախ նախադասութիւններն ունեն միայն ներքին տրամաբանական կապ։—

Աշունը եկաւ, թափեցաւ սաղարթ,
Էլ մի փնտրիլ դու մանուշակ ու վարդ.
Բնութիւնը տխուր, պարտէզը տրտում,
Ձմեռւայ հոգսն է մարդոցը սրտում։

Այս բոլոր նախադասութիւնները նկարագրում են աշնանային մի պատկեր։ Իւրաքանչիւրը նրանցից առանձնապէս պարունակում է իր մէջ մի ամբողջական միտք. բայց բոլորը միասին կազմում են մի բարդ նախադասութիւն, որ բաղկացած է մի քանի ինքնուրոյն նախադասութիւններից։ Զը նայելով, որ առաջին, երկրորդ և երրորդ նախադասութիւնների մէջ դրւած են ստորակէտներ (,), իսկ երրորդից յետոյ՝ միջակէտ (.), բայց և այնպէս այդ բոլոր նախադասութիւնները ունեն ներքին կապ։

Ինքնուրոյն նախադասութիւնների կապակցութիւնը լինում է չորս տեսակ՝ 1. *բաղհիւսական*

(соединительное), 2. *ներհակական* (противительное, 3. *տրոհական* (раздѣлительное) և 4. *պատճառական* (винословное)։

ԲԱՂՀԻՒԱԿԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹԻՒՆ

§ 34. Բաղհիւսական կոչւում է այն նախադասութիւնների կապակցութիւնը, որոնք պարունակում են իրանց մէջ միմեանց հետ համաձայն մտքեր։—

Երուսաղէմ քաղաքի տեղը մի մշակւած դաշտ էր, եւ տաճարի տեղը պատկանում էր երկու եղբօր։

—

Քանի կը յիշեմ՝ սիրտս խոցոտի,
Ու ճմլած հոգիս վրիժու բոցոտի։

—

Ու գնաց որդին, շատ քրտինք թափեց,
Մեծ հարստութիւն, մեծ գանձ ժողովեց,
Ու դարձաւ հօրը, ասաց պարծանքով...

—

Ես մինչև մահ ու կախաղան
Էլ չեմ թողնիլ իմ զէնքը...
Էլ այսուհետ չեմ լսելու
Զանգակների զօղանջիւն։

—

Առաջ երկինքը թխպում է, յետոյ անձրև է գալիս։

—

Խաղաղ գիշեր էր. ոչ ձայն էր լսւում, ոչ տերև էր շարժւում։ Ոչ միայն մարդիկ էին քնած, այլ եւ քնած էր ամբողջ բնութիւնը։ Կիւրակի օր ես տանից դուրս չեկայ. առաջինը՝ մեզ մօտ հիւրեր կային, երկրորդը՝ դուրսը շատ շոգ էր։

Բաղդիւսական կապակցութեան մէջ նախադասութիւնները կապակցւում են իրար հետ եւ կամ ու, առաջ—յետոյ, ոչ—ոչ, ոչ միայն—այլ եւ, էլ—էլ, առաջինը, երկրորդը և այլ բառերով։

Վարժութիւն։—Գտէք ձեր սովորած յօդուածներից ու ոտանաւորներից կամ կազմեցէք ձեզանից բաղդիւսական կապակցութեան մի քանի օրինակներ։

ՆԵՐՀԱԿԱԿԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹԻՒՆ

§ 35. Ներհակական կոչւում է այն նախադասութիւնների կապակցութիւնը, որոնք պարունակում են իրանց մէջ միմեանց հակառակ մտքեր։—

Սարերի ձիւնը դեռ չի վերջացել,
Բայց դաշտ ու հովիտ փթթել են, բացւել։

—

Իր շուրջը նայեց, աչք ածեց երկար,
Բայց ոչ պահապան, ոչ էլ հովիւ կար.
Միայն մի ամպ էր լողում վերևում...

—

Արևն էլ շողքը կապոյտ երկնքից
Գցել է ներքև ճիւղի արանքից,
Ջուրը փայփայում, հետը խաղ անում...
Սակայն նա դարձեալ աղմուկ է հանում։

—

Ամառը տաք է լինում, իսկ ձմեռը՝ ցուրտ։

—

Ներհակական կապակցութեան մէջ նախադասութիւնները կապակցւում են իրար հետ բայց, սակայն, իսկ, միայն և այլ շաղկապներով։

Բայց կան դէպքեր, երբ ներհակական կապակցութեան մէջ բաց է թողնւում շաղկապը։—

Սիրունը գնաց առաջից տրտում,

Տգեղը՝ յետքից ոխ պահած սրտում։
Այստեղ բաց է թողնւած իսկ շաղկապը։—

Սիրունը գնաց առաջից տրտում, իսկ տգեղը՝ յետքից ոխ պահած սրտում։

Վարժութիւն։—Գտէք ձեր սովորած յօդուածներից ու ոտանաւորներից կամ կազմեցէք ձեզանից ներհակական կապակցութեան մի քանի օրինակներ։

ՏՐՈՀԱԿԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹԻՒՆ

§ 36. Տրոհական կոչւում է այն մտքերի կապակցութիւնը, որոնցից մէկի ընդունելովը հերքւում է միւսը։—

Աշնանը կամ անձրև է գալիս, կամ եղանակը պարզ է լինում։

—

Կէս գիշերին գեղ լուսինը
Լող էր տալիս երկնքում,
Տխուր նայում դէպի աշխարհ
Ու ինքն իրան մորմոքւում.
Մերթ պահւում էր ամպերի տակ
Նա սարսափով ու դողով,
Մերթ ամպերից դուրս էր լողում,
Կրկին փայլում իր շողով։

Ինչպէս տեսնում ենք, տրոհական կապակցութեան մէջ նախադասութիւնները կապակցւում են իրար հետ կամ—կամ, մերթ—մերթ շաղկապներով։

Վարժութիւն։—Գտէք ձեր սովորած յօդուածներից ու ոտանաւորներից կամ կազմեցէք ձեզանից տրոհական կապակցութեան մի քանի օրինակներ։

ՊԱՏՃԱՌԱԿԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹԻՒՆ

§ 37. Պատճառական կոչւում է այն նախադասութիւնների կապակցութիւնը, որոնք պարունակում են իրանց մէջ մի երևոյթի պատճառը և նրա հետևանքը։—

Ուսումը և գիտութիւնը անհրաժեշտ են մարդու համար, այդ պատճառով էլ ծնողներն իրանց որդոց պէտք է տան դպրոց։ Հայերը հասկացան իրանց մօտալուտ վտանգը, որովհետև թաթարները արդէն մօտեցել էին Հայոց երկրի սահմաններին։

Պատճառական կապակցութեան մէջ նախադասութիւնները կապակցւում են իրար հետ որովհետև, այդ պատճառով, ուստի, ուրեմն և այլ շաղկապներով։

Սակայն յաճախ այդ շաղկապները բաց են թողնւում։—

Անբախտ հայրդ գիր չը գիտէր,
Հողագործ էր, կարօտ ուսման.
(Այդ պատճառով) Գիւղի անգութ վաշխառուներ
Քաղցած, ծարաւ թողին նորան,
Հազար ու մի թուղթ գրելով՝
Քո հօր տեղակ ստորագրեցին...

Վարժութիւն.—Գտէ՛ք ձեր սովորած յօդուածներից ու ոտանաւորներից կամ կազմեցէ՛ք ձեզանից պատճառական կապակցութեան մի քանի օրինակներ։

§ 38. Պատճառական կապակցութեանն է պատկանում նաև պայմանական (условное) կապակցու-

թիւնը, որի մէջ դարձեալ յայտնւում է մի երևոյթի պատճառը և նրա հետևանքը։ Բայց պայմանական կապակցութիւնը տարբերւում է պատճառականից նրանով, որ պատճառական կապակցութեան մէջ երևոյթի պատճառը կայ կամ պիտի լինի. իսկ պայմանականի մէջ այդ պատճառը կարող է լինել և չը լինել, ուստի նրա հետևանքն էլ կարող է իրագործւել և չ՝իրագործւել։—

Եթէ քամին դադարում է և ծովը հանդարտ է լինում, նաւերն ազատ առաջ են լողում։

Պայմանական կապակցութեան մէջ նախադասութիւնները կապակցւում են իրար հետ եթէ շաղկապով։

Վարժութիւն.—Գտէ՛ք ձեր սովորած յօդուածներից ու ոտանաւորներից կամ կազմեցէ՛ք ձեզանից պայմանական կապակցութեան մի քանի օրինակներ։

ՊԱՐԲԵՐՈՒԹԻՒՆ

§ 39. *Պարբերութիւն* (періодъ) *կոչւում է այն բարդ նախադասութիւնը, որ սովորականից լինում է աւելի ընդարձակ, պարունակում է իր մէջ աւելի լիակատար միտք և ունի գեղարուեստական ձև։—*

Երբ առաւօտեան արևը պայծառ
Ոսկեզօծում էր դաշտերը դալար,
Զանասէր մեղուին ծաղկոց հրաւիրում,
Շինականներին հանդը դուրս բերում,—||
Մակարը քաղցած՝ պառկած էր թախտին,
Պարապ ու սարապ ըսպասում բախտին։

Այս պարբերութիւնը կարդալիս՝ մեր ձայնը նրա առաջին մասում բարձրանում է ու աճում, իսկ երկրորդ մասում՝ ցածրանում է ու նւազում։ Այդ պատճառով էլ առաջին մասը կոչւում է աճում, իսկ երկրորդ մասը՝ նւազում։ Առհասարակ աճումը բաժանւում է նւազումից ստորակէտով կամ ստորակէտով ու անջատման գծով (,—)։

Կարճ պարբերութիւնը կոչւում է պարզ, իսկ աւելի ընդարձակը՝ բարդ։

Պարբերութիւնն ունի երկու վերլուծութիւն՝ 1) տրամաբանական, երբ ուշադրութիւն ենք դարձնում նրա բովանդակութեան և մտքի վրա, և 2) համաձայնական, երբ ուշադրութիւն են դարձնում նրա կազմութեան վրա։

Երբ պարբերութիւնը վերլուծում ենք տրամաբանական կողմից, պէտք է ցոյց տանք նրա թէ գլխաւոր միտքը, այսինքն պարբերութեան ընաբանը (թէման), և թէ երկրորդական մտքերը։

Վերևի պարբերութեան մէջ գլխաւոր միտքն է՝ Մակարը քաղցած սպասում էր բախտին, որ արտայայտւած է նւազումի մէջ, իսկ բոլոր միւս մտքերը երկրորդական են։

Երբ պարբերութիւնը վերլուծում ենք համաձայնական կողմից, պէտք է ցոյց տանք՝ թէ քերականական ինչ եղանակով են կապւած միմեանց հետ նրա աճումը և նւազումը՝ ստորադրակա՞ն, թէ՞ շարադրական։

Պարբերութիւնները լինում են ութը տեսակ՝ 1. պատճառական (причинный), *2. պայմանական* (условный), *3. համեմատական* (сравнительный), *4. բացատրական* (изъяснительный), *5. հետեւողական* (послѣдовательный), *6. ներհակական* (противительный), *7. բաղհիւսական* (соединительный) *և 8. տեղատւական* (уступительный)։

§ 40. *Պատճառական կոչւում է այն պարբերութիւնը, որի մի մասը պարունակում է իր մէջ մի բանի պատճառը կամ հիմքը, իսկ միւսը՝ այդ պատճառի կամ հիմքի հետեւանքը։ Այդ պարբերութեան մասերը միանում են իրար հետ որովհետեւ, ուստի և այլ քերականական կապերով։—*

Շատ հեղինակներ, չը նայեած նրանց ուսումնականութեան ու գիտութեան, վրդովում են հոգիս և այն ժամանակ, երբ ասում են ճշմարտութիւն, ||

որովհետեւ այդ ճշմարտութիւնը մեռած է նրանց բերանում, որովհետեւ այդ ճշմարտութիւնը բղխում է նրանց ոչ բարի սրտից, որովհետեւ սիրոյ շունչը չի տաքացնում այդ ճշմարտութիւնը։

Վարժութիւն.—Կազմեցէք պատճառական պարբերութիւններ այս բնաբաններով՝ 1. Ամենալաւ հարստութիւնը գիտութիւնն է, 2. Մի ծաղիկով գարուն չի լինիլ։

§ 41. Պայմանական կոչւում է այն պարբերութիւնը, որ պարունակում է իր մէջ մի բանի թէական կամ ենթադրական պատճառը և նրա թէական կամ ենթադրական հետեւանքը։ Այս պարբերութեան մասերը միանում են իրար հետ եթէ, թէ, թէ որ— այն ժամանակ և այլ կապերով։—

Երկար աշխատանքից յետոյ, եթէ ուզում էք հանգստացնել ձեր ջղերը, հեռու լինել քաղաքային աղմկալի կեանքից ու նեխուած օդից. եթէ ուզում էք, որ ձեզ չը խանգարեն կառքերի ձայնը ու գիշերը հանգիստ քնէք ձեր տանը. եթէ ուզում էք պարզ ու նահապետական կեանք վարել, || գնացէք գիւղը, որտեղ կը հանգստանաք բնութեան ծոցում, կը շնչէք մաքուր ու առողջարար օդ, կը զբօսնէք կանաչ ծառերի հովանու տակ, կը լսէք թռչունների անուշ դայլայլը ու բիւրեղափայլ առուների քաղցր կարկաջիւնը։

Վարժութիւն։—Կազմեցէք մի քանի պայմանական պարբերութիւններ այս բնաբաններով՝ 1. Անգործութիւնը մեղվընաս է բերում, 2. Անհունաբ մարդու լեզուն երկար կը լինի։

§ 42. Համեմատական կոչւում է այն պարբերութիւնը, որի մէջ համեմատւում են իրար նման առարկաներ։ Այս պարբերութեան մասերը միանում են իրար հետ՝ ինչպէս—այնպէս, պէս, նման, ինչքան—այնքան և այլ կապերով։—

Ինչպէս աշնան երկնքիցը
Կըտրւում է անձրևը,
Եւ ամպերի միջից յանկարծ
Շողշողում է արևը,— ||
Այնպէս էլ գեղ. չքնաղ կոյսի
Արտասունքը դադարեց.
Յուսոյ փայլը շողաց յանկարծ,
Նախշուն դէմքը զարդարեց։

Վարժութիւն։—Կազմեցէ՛ք համեմատական պարբերութիւններ այս բնաբաններով՝ 1. Ծով և արտ, 2. Տուն ու բուն։

§ 43. Բացատրական կոչւում է այն պարբերութիւնը, որ պարունակում է իր մէջ մի բանի բացատրութիւնը կամ ոյժը։ Այս պարբերութեան մասերը միանում են իրար հետ՝ այնպէս—որ, այնքան—որ, այնքան—մինչեւ որ և այլ կապերով։—

«Վէրք Հայաստանին» այնքան ոգևորել էր Խ. Աբովեանին, || որ հեղինակն այդ գիրքը գրելիս՝ մոռացել էր ամեն բան. ոչ մի րոպէ չէր հանգստանում, անդադար գրում էր ու գրում. ոչ ճաշի ժամանակ էր ճաշում, ոչ քնի ժամանակ էր քնում, չը նայելով, որ տանեցիք շուտ-շուտ յիշեցնում էին նրան այդ մասին։

Վարժութիւն.—Կազմեցէ՛ք բացատրական պարբերութիւններ այս նիւթերով՝ 1. Մարդ ինչքան բարի պիտի լինի, 2. Մինչև Շուշանը զարդարւի, ժամը դուրս կը գայ։

§ 44. Հետեւողական կոչւում է այն պարբերու-

թիւնը, որ պարունակում է իր մէջ իրար յաջորդող գործողութիւններ կամ դէպքեր։ Այս պարբերութեան մասերը միանում են իրար հետ՝ երբ—այն ժամանակ, հէնց որ—իսկոյն և այլ կապերով։—

Երբ մզկիթից Մուհամէդի
Ազանը զիլ հնչում էր, ||
Ամեն անգամ Աղամ-Ալին
Սրտի խորքից հրճւում էր.
Նա հինայած, կարմրաթաթախ
Իր մօրուսը շփելով՝
Սկըսում էր իր նամազը,
Սառը գետնին չոքելով։

Վարժութիւն։—Կազմեցէք հետևողական պարբերութիւններ այս բնաբաններով՝ 1. Գարնան գալը, 2. Ինչ են անում մարդիկ աշնանը։

§ 45. Ներհակական կոչում է այն պարբերութիւնը, որ պարունակում է իր մէջ իրար հակադիր մտքեր։ Այս պարբերութեան մասերը միանում են իրար հետ՝ բայց, սակայն, ընդհակառակը և այլ կապերով։—

Ագուլիսի տների մէջ
Լոյսը վաղուց մարել է,
Եւ յոգնատանջ ժողովրդի
Քունը վաղուց տարել է, ||
Բայց Մուսայի, Աղամ-Ալու
Քունը բնաւ չէր տանում.
Ամբողջ գիշեր արթուն նստած՝
Խորհում էին այլանում։

Վարժութիւն։—Կազմեցէք ներհակական պարբերութիւններ այս բնաբաններով՝ 1. Թռչունների մէջ սոխակը բոլորից գեղեցիկ է երգում, 2. Հայրենիքը սուրբ է բոլորի համար։

§ 46. Բաղդիւսական կոչւում է այն պարբերութիւնը, որ պարունակում է իր մէջ մի շարք իրար հետ միացած երևոյթներ։ Այս պարբերութեան մասերը միանում են իրար հետ՝ ոչ միայն—այլ եւ, ոմանք—ոմանք և այլ կապերով։—

Պետրոս Մեծը ոչ միայն յաղթեց Շուեդացիներին ու ընդարձակեց Ռուսաստանի սահմանները, || այլ եւ զօրեղացրեց նաւատորմիղը, տարածեց ուսումը և գիտութիւնը, փոխեց ժողովրդի նիստ ու կացը և շատ բարենորոգութիւններ մտցրեց իր երկրում։

Վարժութիւն.—Կազմեցէք բաղդիւսական պարբերութիւններ այս բնաբաններով 1. Մարդ ինչքան բարի պիտի լինի, 2. Աշխատանքը յաղթում է բոլոր դժւարութիւններին։

§ 47. Տեղատուական կոչւում է այն պարբերութիւնը, որ պարունակում է իր մէջ մի բանի հակառակ հետևանքը։ Այս պարբերութեան մասերը միանում են իրար հետ՝ թէպէտ (թէեւ)—բայց, ճիշտ է—բայց, թող, չը նայելով—այնուամենայնիւ և այլ կապերով։—

Թէպէտ տունկս փոքրիկ է, ցած,
Արօտներում միշտ թաք կացած, ||
Բայց իմ փունջս ամենի տան,
Թէ աղքատի, թէ մեծատան,
Իբրև գարնան առաջին գարդ,
Կարէ տեսնել ամեն մի մարդ։

—

ՀԱՅԿ. ՍՍՀ ԳՐԱԴԱՐԱՆ
Հ.Ս.Ս.Հ. Գրադարան
7/71 1929
ԱՄԵՆՈՒԱ, Մեծ
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

Թող փչէ քամին պաղ-պաղ երեսիս,
Վերէն ամպերէն սաստիկ ձիւն թող գայ,
Որքան որ կ'ուզէ՝ թող փչէ հիւսիս, ||
Յուսով եմ, վաղ-ուշ գարուն պիտի գայ։

Վարժութիւն։ Կազմեցէք տեղատուական պարբերութիւններ այս բնաբաններով՝ 1. Աղքատութիւնը արատ չէ. 2. Ամեն բան իրան տեղը։

ՆԿԱՏԻԱԾ ՎՐԻՊԱԿՆԵՐ

Երես	Տող	Սխալ	Ուղիղ
3	16	եմ	իմ
5	10	փոփողուող	փոփոխուող
13	17	գարուը	գարունը
15	26	ձեքից	ձեռքից
47	2	սկսում	սկսում են
50	11	նախադասութիւններ	նախադասութիւնները
57	3	սիրուն	սիրունը
59	5-6	պայմարականի	պայմանականի
61	18	послѣдовательный	послѣдовательный
63	27	նիւթերով	բնաբաններով
64	14	նիւթերով	բնաբաններով

. . . . . .
. . . . . .

ՑԱՆԿ

Երես

Առաջաբան 3
§ 1. Համաձայնութիւնը և նրա բաժանումը . . . 5

I

ԲԱՌԵՐԻ ԿԱՊԱԿՑՈՒԹԻՒՆԸ

Նախադասութեան անդամների արտայայտութիւնը բանի մասերով

§ 2. Ենթակայի արտայայտութիւնը 7
§ 3. Ստորոգեալի արտայայտութիւնը 7
§ 4. Լրացուցչի արտայայտութիւնը 8
§ 5. Յատկացուցչի արտայայտութիւնը 8
§ 6. Պարագայական բառերի արտայայտութիւնը . 9

Ստորոգեալի համաձայնութիւնը ենթակայի հետ

§ 7. Պարզ ստորոգեալի համաձայնութիւնը 10
§ 8. Բարդ ստորոգեալի համաձայնութիւնը 12
§ 9. Բայի ժամանակների գործածութիւնը 14

Յատկացուցչի համաձայնութիւնը յատկացեալի հետ

§ 10. Ածական յատկացուցչի համաձայնութիւնը . . 19
§ 11. Դերբայ, դերանուն և թւական յատկացուցչի համաձայնութիւնը 20
§ 12. Գոյական յատկացուցչի համաձայնութիւնը . 21

Հոլովների գործածութիւնը

§ 13. Ուղղական հոլով 24
§ 14. Սեռական հոլով 25
§ 15. Տրական հոլով 26
§ 16. Հայցական հոլով 28
§ 17. Բացառական հոլով 30
§ 18. Գործիական հոլով 32

§ 19. Ներգոյական հոլով 34
§ 20. Կոչական հոլով 35

II

ՆԱԽԱԴԱՍՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԿԱՊԱԿՑՈՒԹԻՒՆԸ

§ 22. Ստորադրական կապակցութիւն 36
§ 23. Ենթակայ և ստորոգեալ նախադասութիւններ 37
§ 84. Յատկացուցիչ նախադասութիւնների կապակցութիւնը 39
§ 25. Յատկացուցիչ նախադասութիւնների կրճատումը 40
§ 27. Լրացուցիչ նախադասութիւնների կապակցութիւնը 43
§ 28. Լրացուցիչ նախադասութիւնների կրճատումը . 44
§ 29. Պարագայական նախադասութիւնների կապակցութիւնը 46
§ 30. Պարագայական նախադասութիւնների կրճատումը 48
§ 31. Ենթակայ և ստորոգեալ նախադասութիւնների կապակցութիւնը 51
§ 32. Ենթակայ և ստորոգեալ նախադասութիւնների կրճատումը 51
§ 33. Շարադրական կապակցութիւն 54
§ 34. Բաղդիւսական կապակցութիւն 55
§ 35. Ներհակական կապակցութիւն 56
§ 36. Տրոհական կապակցութիւն 56
§ 37. Պատճառական կապակցութիւն 58
§ 38. Պայմանական կապակցութիւն 58
§ 39. Պարբերութիւն 60
§ 40. Պատճառական պարբերութիւն 61
§ 41. Պայմանական պարբերութիւն 62
§ 42. Համեմատական պարբերութիւն 62
§ 43. Բացատրական պարբերութիւն 63
§ 44. Հետևողական պարբերութիւն 63
§ 45. Ներհակական պարբերութիւն 64
§ 46. Բաղդիւսական պարբերութիւն 65
§ 47. Տեղատուական պարբերութիւն 65

«Ազգային գրադարան»
NL0230990

8

6320

ԼՈՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ

Ցարութիւն Թումանեանի

1) ԽՕԼԵՐ, վոդեվիլ . . . . . 20 կոպ.
2) ԱՐԻՈՒԹԵԱՆ ԹԵՒԵՐԸ (թարգմ.) . . . . . 30 »
3) ԱՄՈՒՐԻՆ (սակաւաթիւ) . . . . . 20 »
4) ՀԱՆԱՔ ՈՒ ԴԱՆԱԿ (սակաւաթիւ) . . . . . 30 »
5) ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ (սակաւաթիւ) . . . 50 »
6) ՄԵԼԻՔ-ԲԷԳԼԱՐ, պատմ, պոէմ (սակաւաթիւ) . 10 »
7) ՄԵԼԻՔ-ԻՍՈՒՓ, » » . . . . . 20 »
8) ՄՈՒՍԱ, պատմ. պոէմ I հատ . . . . . 20 »
9) ՄՈՒՍԱ, » » II » . . . . . 20 »
10) ՆՈՒԱԳՆԵՐ . . . . . 30 »
11) ՀԱԶԱՐԱՆ-ԲԼԲՈՒԼ, ֆէէրիա 3 արարածով . 30 »
12) ԱՐՏԱՒԱԶԴ Բ. պատմ. ֆէէրիա 4 պատկերով 30 »
13) ՈՒՂՂԱԳՐԱԿԱՆ ԱՂԻՒՄԱԿ . . . . . 3 »
14) ՌՈՒՍ-ՀԱՅԵՐԷՆ ԲԱՌԱՐԱՆ . . . . . 75 »
15) ՀԱՅ-ՌՈՒՍԵՐԷՆ ԲԱՌԱՐԱՆ . . . . . 1 ռ. »
16) ՍՏՈՒԴԱԲԱՆՈՒԹԻՒՆ Բ. տպագրութիւն . . 40 »
17) ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԻՒՆ . . . . . 40 »

Դիմել՝ Թիֆլիսի դրավաճառներին կամ հեղինակին՝
Тифлисъ, Чавчавадзевская, № 25 а,
Арутюну Туманьяну,